

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի մեղավոր մարդ, որ իր դատերն ապականել էր, եկավ Եպիսկոպոսի մոտ՝ իր հանցանքները խոստովանելու: Նա մեծապես ու զարմանալի զղջումով եւ հորդահոս արտասուքով խոստովանեց և հարցրեց.

- Սոսկ զղջումով ու չարչարանքներով կարո՞ղ եմ արդյոք Տիրոջից թողություն գտնել:

- Անկասկած այդպես է,- պատասխանեց Եպիսկոպոսը,- կարող ես եթե կամենաս այդ հանցանքներիդ համար ապաշխարել:

Եվ նա ի խորոց սրտի աղաղակեց՝ ասելով.

- Կամենում եմ, եթե նույնիսկ հրամայես հազար անգամ մահ հանձն առնել:

Իսկ Եպիսկոպոսը, գթալով թշվառականին, ասաց.

- Քեզ ընդհամենը յոթ տարվա ապաշխարություն եմ տալիս:

Այն ժամ մեղավորն ասաց.

- Ինձ նման մեծագույն չարագործի համար ընդհամենը յոթ տարվա ապաշխարություն սահմանելն ինչ է. եթե մինչև աշխարհի վերջն էլ կենդանի մնամ, այդքան չարագործությունները քավել չեմ կարողանա:

Եպիսկոպոսը պատասխանեց.

- Գնա՛ և միայն հաց ու ջրով երեք օր պա՛հք պահիր:

Այդ ժամանակ մարդն առավել ողբալով ու կուրծք ծեծելով աղաչեց, որ փրկության ապաշխարությունն առաջնորդի իրեն: Եպիսկոպոսն էլ, խիստ զարմանալով և ուրախանալով, նրան պատվիրեց, որ գնա և միայն «Հայր Մեր»-ն ասի՝ ստուգապես իմանալով, որ իր մեղքերը ներված են: Իսկ մարդն այդ, ուժգին աղաղակոցով գետնին ընկնալ և հոգին ավանդեց: Անկասկած պարզ է, որ այսօրինակ ապաշխարությամբ նա ընդունելի եղավ Աստծուն և փոխադրվեց անանց կյանք:

\*\*\*

Մի մարդ, որ վաշխ ու տոկոս էր վերցնում: Քահանան մշտապես նրան խրատում և ապաշխարության էր հորդորում, իսկ նա էլ ասում էր.

- Լավ, լավ, կգա ժամանակ, կապաշխարեմ:

Նույնը նաև հիվանդության ժամանակ էր ասում: Իսկ քահանան տեսնելով դրա վտանգը՝ ջանադրաբար ստիպում էր նրան, որ ապաշխարի: Եվ երբ արդեն մահամերձ էր, քահանան դարձյալ փորձեց խոստովանության ու ապաշխարության բերելու: Իսկ նա աղաղակեց.

- Օ՛վ ապաշխարություն, ո՞ւր ես: Ես այլևս ապաշխարել չեմ կարողանում: Եվ սա Աստծո արդար դատաստանով էր, քանզի այն ժամանակ, երբ կարող էի ապաշխարել, չկամեցա:

Այսպես ասելով էլ մեռավ:

#### ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խիստ մեծապատիվ մի եպիսկոպոս կար, որ ոչ միայն եկեղեցական գործերն էր վարում, այլև զբաղվում էր աշխարական այլ գործերով: Մի օր, երբ զորականների բազմության հետ սպառազինված անցնում էր արտերով, մի հողագործի տեսավ, որ գութանը հանդում թողած՝ կանգնել և ուշադիր ու ակնապիշ նայում էր հեծելազորին: Տեսածից զարմացած՝ նա ձին ճանապարհից մի փոքր շեղեց դեպի շինականը և նրան դառնալով՝ քաղցրությամբ ասաց.

- Մի բան եմ ուզում հարցնել քեզ, բարի՛ մարդ, եթե կամենում ես հարցիս անկեղծ պատասխան տալ:

Հողագործը խոնարհությամբ պատասխանեց.

- Ո՞վ եմ ես, կամ ովքե՞ր են իմ ազգականները, որ քեզ՝ իմ մեծապատիվ տիրոջը, պատասխան չտամ:

Եվ եպիսկոպոսը հարցրեց.

-Ասա՛ խնդրեմ, ի՞նչ էիր խորհում, երբ ինձ նայելով՝ այդպես ծիծաղում ու հրճվում էիր:

- Մտածում էի,- պատասխանեց հողագործը,- թե արդյո՞ք սուրբ Մարտինոսը, որ նույնպես եպիսկոպոս էր, նման սպառազինությամբ եւ զորականների բազմությամբ էր ճանապարհ գնում:

Եպիսկոպոսը, փոքր-ինչ ամաչելով, ասաց.

- Ես ոչ միայն եպիսկոպոս եմ եւ եկեղեցական, այլեւ աշխարհական կարգով իշխան ու կուսակալ, ինչպես որ այժմ տեսնում ես ինձ: Իսկ թե ուզում ես եպիսկոպոս տեսնել՝ այսինչ օրն արի՛ եկեղեցի:

Հողագործն այս պատասխանից մեղմ ժպտաց եւ եպիսկոպոսին ասաց.

- Եթե Ձերդ մեծությանը դժվար չէ, մի բան էլ ես եմ կամենում հարցնել:

—ÊÝ¹Çñ ãĪ³, Ñ³ñóñá°õ, — á³ĭ³ëË³Ý»ó »áÇëĪáááëÁ£

Հողագործն ասաց.

- Եթե իշխանը, Աստված մի՛ արասցե, իր գործերի պատճառով դժոխքի մատնվի, ապա մեր եպիսկոպոսն ո՞ր կգնա:

Այս հարցից ամաչելով՝ եպիսկոպոսն, առանց հողագործին պատասխան տալու, գնաց: Սակայն նրա խոսքերից քիչ բան չշահեց, քանի որ դրանից հետո խիստ զգուշանում էր, որ աշխարհական գործերով ավելին չզբաղվի, քան եպիսկոպոսության հոգեբարձությամբ, եւ չլինի, որ առավելապես իշխանի եւ ոչ թե եպիսկոպոսի վարձը ընդունի:

## ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի կրոնավոր կար՝ զգեստով եւ ոչ թե վարքով, անունով եւ ոչ թե արդյունավորությամբ, որն մեծապես սովոր էր ամեն տեսակի բամբասանքների: Երբ մահանալու ժամանակը մոտեցավ, նրան հորդորում էին, որ իր հոգու փրկության համար խոստովանի եւ փութաջանություն դրսեւորի: Նա էլ պատասխանեց, թե՛

- Դա չե՛մ անի:

-Ինչո՞ւ,- հարցրին նրան:

Ասաց.

- Չեմ կարող:

Եվ երբ այլեզան խոսքերով նրան հորդորում էին, որ գոնե վերջին շնչում ամբողջ ուժով եւ կատարյալ հույսով Աստծո ողորմությանը դիմի, Փրկչի մարդասիրությունը խնդրի, նա, հանեց լեզուն, մատով հարվածելով նրան՝ ասաց.

- Ինձ դատապարտեց ամենաչար այս լեզուն:

Այս խոսքերի վրա լեզուն այնքան մեծացավ, որ այլեւս բերանում չէր տեղավորվում:

Եվ այս կերպ մեռնելով՝ բոլոր բամբասողներին կորստյան օրինակ ցույց տվեց:

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի դատավոր իր տան պատուհանի մոտ երեկոյան նստած՝ նայում էր խոզարածներին, որոնք խոզերին տանում եւ ստիպում էին ներս մտնել: Իսկ երբ չհաջողվեց, նրանցից մեկն ընկերոջն ասաց.

- Եթե կամենում ես, որ խոզերն արագ խոզանոց մտնեն, կանչի՞ր նրանց. «խոզե՛ր, խոզե՛ր, այնպես արագ մտեք ձեր խոզանոցը, ինչպես, օրինակ, դատավորներն են դժոխք մտնում»:

Երբ խոզարածն այս ասաց, խոզերն անմիջապես, առանց հապաղելու սկսեցին մտնել իրենց բնակության վայրը:

Դատավորն այս տեսնելով՝ երկյուղածությամբ ըմբռնեց արդարությունը. դատական իշխանությունը թողեց և իր որդիների հետ իսկույն դեպի վանք շտապեց, ուր եւ խստակրոն վարքով, աղոթքով և արտասուքով ապրում էր, և այնքան անողորմ էր իր մարմնի հանդեպ, որ մինչև իսկ բազում վանքերի հայր դառնալով՝ ամենուր, որտեղ կրոնավորներ էին ապրում, շրջում էր բոկոտն:

### ՄԵՂՔԵՐԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևելի, գիտությամբ զարդարված մի մարդ կար: Սա տոնական մի օր նոր ու թանկարժեք հագուստներ հագավ, զանազան պատիվներով մեծարվեց, ամբողջ օրն ընկերների հետ խաղ ու խարխճանքների, ըմպելիքի ու այս աշխարհի զանազան ունայն բաների մեջ անցկացրեց:

Երբ երեկո եղավ, զգաստացավ և լռելյայն իր սրտում ասաց. «Ո՞ւր է տոնախմբությունը, որ այսօր կատարեցինք, ո՞ւր գնացին բոլոր այն խրախճանքները»:

Արդ, տեսնելով, որ աշխարհիկ բոլոր ուրախությունները շուտափույթ անցնում են և տրտմության ու ցավի փոխակերպվում, հաջորդ առավոտ կրոնավորների վանք գնաց, որտեղ երկար տարիներ սրբությամբ, գիտությամբ և իմաստությամբ Աստծուն ծառայեց և, բարի համբավով հռչակվելով ու փայլելով՝ անանց կյանք փոխադրվեց:

\*\*\*

Մի ավազակապետ կար՝ այնքան չարագործ, անողորմ, արյունարբու, որ ճանապարհին ում հանդիպում էր, սպանում էր: Սուրբ ու առաքինի մի վանահայր, այս լսելով, կրկնակի հանդերձներ հագավ և ազնվազարմ ձին նստեց եւ գնաց այն կողմերը, որտեղ ավազակապետն էր գտնվում: Սրան բռնեցին եւ բերեցին ավազակապետի մոտ: Վանահայրն ավազակապետին հարցրեց.

- Ի՞նչ ես ուզում:

- Ձիդ ու զգեստներիդ,- պատասխանեց նա:

Այն ժամանակ Հայրը նրան ասաց.

- Իրավունք ունես խնդրելու, քանի որ այս ամենն Աստծունն են և մանավանդ՝ հասարակաց են: Արդ, քանի որ ես երկար ժամանակ վայելեցի՝ արժանի է, որ հիմա էլ դու վայելես: Բայց կամենում եմ իմանալ, թե ի՞նչ ես անելու սրանք:

Պատասխանեց.

- Վաճառելու ենք և ուտելիք գնենք:

Այնժամ Հայրն ասաց.

- Որոյակ, ինչո՞ւ ես այդքան չարչարանքով ու վտանգներով ուտելիք ու հանդերձանք հայթայթում: Ինձ հետ արի՛, և ես անհրաժեշտ քո բոլոր պետքերը քեզ կտամ:

Իսկ երբ սա հրաժարվեց՝ ասելով, թե ոսպ ու բակլա ուտել չի կամենում, Հայրը նրան ասաց.

- Քեզ և՛ միս, և՛ ձկնեղեն, և՛ հաց, և՛ անուշ գինի, և՛ շքեղազարդ անկողին կտամ, միայն թե իմ հետևից եկ:

Եվ երբ համաձայնվեց և վանք եկավ, հայրը նրան հանձնեց եղբայրներից մեկին, ով ամեն օր նրան նախապես ասված բոլոր անհրաժեշտ բաները բերում էր: Արդ, երբ ավազակապետը հագնում էր, կրոնավորի կարգադրությամբ նստում էր գետնին՝ նրա դիմաց և տեսնում, որ նա միայն հաց էր ուտում և ջուր խմում:

Ավազակապետը նրան հարցնում է.

- Ինչի՞ համար ես այդքան ծանր ապաշխարություն կատարում: Մի՞թե մեկին սպանել ես, կամ պոռնկություն արել:

Կրոնավորը, զարմանալով ու սոսկալով, պատասխանում է.

- Հեռու՛ ինձնից, Աստված մի՛ արասցե, եթե ես մարդ սպանած կամ թե մարմինս պոռնկության մեղքով ապականած լինեմ, քանի որ մանկությունից ի վեր այս վանքում եմ մեծացել: Նրա համար եմ ապաշխարում, որ մեռնելիս Աստծո առաջ ողորմություն գտնեմ:

Այդ ժամանակ ավազակը զղջալով՝ ասում է.

-Ես՝ եղկելիս ու թշվառականս, որ այնքան գողություն, մարդասպանություն, շնություն եւ այնքան անթիվ-անհաշիվ չարիքներ եմ գործել ու երբեք պահք չեմ պահել, ինչպե՞ս ողորմած Աստծուն ինձ հետ կունենամ:

Եվ ընկնելով վանահոր ոտքերը՝ արտասուք թափելով այնքան ապաշխարեց, որ ժուժկալությամբ ամենքին գերազանցեց:

## ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկու օտարական մուրացկան, պատառոտված զգեստներով, առանց շապիկի, համարյա մերկ, Հայր Իսահակի մոտ եկան եւ նրանից ողորմություն խնդրեցին: Եվ մինչ սրանք հանդերձներ էին խնդրում, Աստծո մարդն էլ լուռ լսում էր: Ապա իր մոտ կանչելով աշակերտներից մեկին՝ ասաց նրան.

- Գնա՛ անտառ և այնտեղ՝ այսինչ տեղում, երկճղանի ծառ կգտնես, և այնտեղ գտնվող հագուստներն առնելով՝ կբերես այստեղ:

Եվ երբ աշակերտը գնաց գտավ ամեն բան՝ ծածուկ բերեց հոր մոտ: Նա էլ, վերցնելով դրանք, մերկ ու մուրացիկ աղքատներին ասաց.

-Առե՛ք և հագե՛ք, քանի որ մերկ եք:

Սրանք, երբ տեսան զգեստները, ճանաչեցին. իրենք էին թաքցրել դրանք, և սաստիկ վախեցան:

Եվ այսպես՝ նրանք, որ դավաճանությամբ ուրիշների հանդերձանքն էին խնդրում, ամոթով իրենցը վերցրին:

Երկու մեծահարուստ, իրար նկատմամբ խիստ թշնամությամբ լցված, շարունակ սպասում էին պատեհ առիթի, որ բռնեն կամ սպանեն մեկը մյուսի: Նրանցից մեկը չարագործ մի ծառա ուներ, որ այդ ժամանակ ուրիշի մեկին էր ծառայում: Այս ծառան, գալով սրա մոտ, սկսեց ամբաստանել ներկա տիրոջը և խոստացավ, որ դյուրին կերպով նրան կհանձնի վերջինիս ձեռքը: Եվ սա էլ, մեծապես ուրախանալով, խոստացավ նրան ծառայության դիմաց արծաթ տալ: Ահա չարագործը, հարմար պահ գտնելով, իր տիրոջը զցեց թշնամու ձեռքը: Երբ վերջինս նրան սպանեց, այս դավաճանն անմիջապես գնաց սպանվածի բարեկամների մոտ և նույն դավաճանությամբ սպանողին մատնեց: Այս բանը շուտով ի հայտ եկավ, և նրանցից մեկը, ում մոտ կանեցում էր մատնել սպանողին, բռնեց եւ դատավորի հրամանով կախեց ծառից: Ազգականների խնդրանքով նրա մարմինը գիշերով թաղեցին, բայց զարմանալի մի բան տեղի ունեցավ. առավոտյան մի խումբ անծանոթ շներ, բազում մարդկանց վկայությամբ, նրա մարմինը գերեզմանից հանեցին ու պատառ-պատառ արեցին:

## ՋՂԶԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մի կին, պոռնկության հրով վառված, տռփանքով լցվեց հարազատ որդու նկատմամբ եւ նրանից մի արու զավակ ծնեց: Ապա նման զազիր գործերից զարհուրած՝ ամեն ժամ երկնչում էր, թե հնարավոր է դիվահարվի կամ հանկարծակի չարամահ լինի:

Դրանից հետո Աստծո ողորմությամբ սկսեց խորհել, ապաշխարել և առաջնորդի խրատով իր որդու հետ գնաց Հռոմ և մեծ վստահությամբ հայրապետի առաջ կանգնեց: Սաստիկ արտասուքներով ու հառաչանքով, բոլորին մեկ առ մեկ

խոստովանեց իր մեղքերը, մինչև իսկ բոլորին զարմանք պատճառելու չափ՝ որդուն էլ, որպես իր գործած անօրենության վկա, իր մոտ ունենալով:

Իսկ հայրապետը, տեսնելով կնոջ այսչափ զղջումն ու ճշմարիտ ապաշխարությունը, գթաց, ճարտար բժշկի պես կամեցավ ախտավորին կատարելապես ու շուտափույթ առողջացնել, նաև զղջման մեջ նրան փորձելու նպատակով հրամայեց, որ կինը իրեն ներկայանա այն զգեստով, որով որդուն էր այցելել մեղանչելիս: Եվ նա, հավիտենական ամոթը ժամանակավորից առավել համարելով, անմիջապես զգեստները հանեց և հայրապետի առաջ կանգնեց միայն շապկով: Եվ ինչպես պատրաստ էր (մեղքերի) դիմաց հատուցելու, նույնպես էլ բավարարեց իր հնազանդությամբ:

Հայրապետը մտածեց, որ մեղի ոչ մի պատիժ չի կարող ընդհանալ բոլորի մոտ այսքան ամոթ (կրելու) այսչափ հնազանդությանն ու այսչափ ապաշխարությանը, կնոջն ասաց.

- Քո մեղքերը ներված են, գնա՛ խաղաղությամբ:

Եվ որպես ապաշխարություն՝ նրան ոչինչ այլևս չկարգադրեց:

Երբ եպիսկոպոսներից մեկն այս լսեց, փարիսեցու նման հայրապետի դեմ քրթմնջալով, նրան հանդիմանեց՝ ասելով.

- Այդքան մեղքերի դիմաց այսչափ քիչ ապաշխարություն կատարյալ չէ:

Հայրապետը պատասխան տվեց.

- Եթե ես անհրավ կերպով արեցի դա, և Աստծո առաջ նրա ապաշխարությունը բավական չէ, թո՛ղ սատանան իմ մեջ մտնելու զորություն առնի և ամենքի առաջ ինձ չարչարի, իսկ եթե դու ես հանիրավի ինձ հանդիմանում, թո՛ղ քեզ հետ կատարվի:

Երբ հայրապետն այս ասաց, դեն իսկույն սկսեց եպիսկոպոսին տանջել, որով հայտնապես Աստված ցույց տվեց, թե կնոջ ապաշխարությունը կատարյալ էր: Ապա դրանից հետո, ամենքի աղոթքով ազատվելով դեկից՝ եպիսկոպոսը սովորեց ապագայում իր չարչարանքների գնով չնվազեցնել Աստծո մարդասիրությունը:

## ԵՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Երկու քաղաքացիներ իրենց մեղքերը քահանային խոստովանելիս, մեղքերի ևս երկու տեսակ խոստովանեցին, որոնք թեպետև ըստ իրենց շատ ծանր մեղքեր են,



ասկայն սովորաբար վաճառականների մոտ թեթև են համարվում կամ չնչին. այն է՝ սուտ խոսելն ու սուտ երդվելը: Եվ ասացին.

- Հայր, ոչ մի բան չենք կարող գնել կամ վաճառել, եթե սուտ չասենք կամ սուտ չերդվենք:

Խոստովանահայրը նրանց ասաց.

- Այդպիսի մեղքերը ծանրագույն են և Փրկչի կողմից արգելված. այնտեղ, որտեղ ասում է. «Ձեր խոսքը լինի՝ այոն՝ այո, և ոչը՝ ոչ» (Մատթ. Ե 37):

Եվ նրանք պատասխանեցին.

- Այդ պատվիրանը չենք կարող առևտրում պահել:

Քահանան նրանց ասաց.

- Անսացե՛ք իմ խրատին և լավ հաջողություն կունենաք:

Սուտ մի՛ ասեք և սուտ մի՛ երդվեք, այլ երբ կամենում եք մի բան վաճառել, այնչափ գովեք:

Եվ նրանք խոստացան մեկ տարի այդպես փորձել, ինչպես որ քահանան էր պահանջում:

Այդ տարի, սատանայի հնարքով, որ միշտ բարուն հակառակ է, ոչինչ վաճառել չկարողացան: Մի տարի անց խոստովանահոր մոտ դարձան՝ ասելով.

- Մեր հնազանդությունն այս տարի մեզ մեծ վնաս հասցրեց, քանի որ մարդիկ մեզնից երես դարձրին, և առանց երդման ոչինչ չկարողացանք վաճառել:

Այդժամ քահանան ասաց.

- Մի՛ երկնչեք, քանզի դա փորձություն է, հաստատուն եղեք ձեր սրտերում, որ ոչ մի ներհակություն, ոչ մի աղքատություն ձեզ այդ ուխտադրությունից հետ չդարձնի, և Տեր Աստված էլ ձեր ունեցվածքը կօրինի:

Նրանք էլ խոստացան, թե՛

- Աստծո կարողությամբ խրատդ ու Աստծո պատվիրանը մեր կյանքի բոլոր օրերում կպահենք, եթե անգամ մուրալու հարկ լինի:

Ջարմանք. Աստված անմիջապես վերացրեց այդ փորձությունը, և մարդիկ սկսեցին նրանց դիմել առավել, քան մյուս վաճառականներին: Եվ ոչ շատ օրեր հետո այն աստիճան հարստացան, որ մինչև իսկ իրենք էին զարմանում:

Եվ դառնալով իրենց խոստովանահոր մոտ՝ նրան գոհություն հայտնեցին, որ նրա փրկարար խրատով նման մեծամեծ հանցանքներից ազատվեցին և երկրային ունեցվածքով բարգավաճեցին:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռներում մոլորված երկու կուսակրոն քահանա փորձում էին ճանապարհ գտնել: Եվ ահա տեսնում են մի կարճահասակ մարդու, որին երբ կանչում են, փախչում է և ոչինչ պատասխանում:

Բայց երբ ստիպում են և հարցնում, թե՛

- Ո՞վ ես, ասա՛

- Երեսուն տարի է ծառայում եմ դեռին: Ինձ նրանց մատնեցի և նրանց դրոշմն եմ կրում ձեռքիս: Ջանազան կերպարանքներով ինձ երևում և ինչ հրամայում են, անմիջապես կատարում եմ:

Նրանցից (քահանաներից) մեկը սկսեց նրան ցույց տալ դժոխքի տանջանքների մեծությունը, մեղքերի ունայնությունն ու Աստծո անսպառ ողորմությունը: Դրանից հետո նա զղջաց, խնդրեց խորհուրդ՝ իր անձը փրկելու համար:

Այդ ժամանակ քահանան ասաց.

- Խոստովանիր՝ քո բոլոր մեղքերը, քանզի այնքան է խոստովանության զորությունը, որ մինչև իսկ սատանանի ուզածո՞ զորություն կարող է բեկանել և Աստծո ուզածո՞ բարկություն՝ մարել և ուզածո՞ հոգևոր զարդով քեզ զարդարել:

Այդ ժամանակ մարդը կատարյալ զղջմամբ խոստովանում է և իսկույն սատանայի դրոշմն ընկնում է նրա ձեռքից:

Այդ ժամանակ քահանաներն ասում են նրան.

- Որպեսզի ավելի ստույգ իմանաս սուրբ խոստովանության զորությունը, համարձակորեն մնա այստեղ և երբ դևը, որին մատնել էիր քեզ, գա քեզ մոտ և չճանաչի քեզ, իմացիր, որ Տեր Աստված թողություն է տվել) քո հանցանքներին:

Նա էլ Աստծո ողորմության հույսով՝ աներկյուղ սպասեց դեկին:

Երբ քահանաները գնացին, հեծյալների մեծ բազմությամբ եկավ սատանան /և/ հարցրեց նրան, թե /արդյոք/ տեսել՞ է իր ծառային:

Նրան մարդը պատասխանեց.

- Ես եմ նա, ով ծառայեց քեզ երեսուն տարի:

Եվ դևն ասաց

- Սուտ ես խոսում, խաբեբա՛, ես քեզ / երբևէ/ չեմ տեսել: Ես նրան եմ փնտրում, ով իմ կնիքն ունի իր ձեռքին:

Եվ նա այս լսելով՝ քահանաների հետ գնաց և մինչ ի մահ ծառայեց Աստծուն:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ձեռնումով՝ առանց խոստովանության, մեղքերի թողության չեն հասնի: Եվ սա է ցուցանում այս օրինակը: Մի կին, իր մեղքերը խոստովանելիս, մեկը թաքցնում է. խիստ մեծ ամոթից համարձակվում հայտնի դարձնել: Որի համար էլ խղճից մտովի հույժ չարչարվելով՝ եկեղեցի է գնում և ըմկնելով Աբ. Խեղանի առաջ՝ ողջ մարմինը արտասուքով ողողելով և մեծ պաղատանքով աղաչում էր Աստծուն, որպեսզի այն մեղքը, որ չէր համարձակվում որևէ մեկին հայտնել, առանց խոստովանության թողնվի իրեն: Երբ երկար ժամանակ այսպես աղոթում էր, այն քահանան, որ այդ ժամանակ եկեղեցում էր, տեսնում է սատանային, որ այս կնոջ վրայով այս ու այն կողմ է թռչում և խնդազին ծիծաղում, ծափ էր տալիս և վաշ-վաշ անում: Դրա համար էլ քահանան երդվեցնում է սատանային մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ ասելով.

- Ով՛ պիղծ, ինո՞ւ ես այդքան ուրախ: Ասա՛ ինձ պատճառը, ինչ՞ պատահեց քեզ: Սատանան պատասխանում է.

- Ինչպես՞ չծիծաղեմ տեսնելով այս կնոջը, որ կոծալով ու ողբալով դժոխք է շտապում: Անմիտը կարծում է, թե լալով ու արտասվելով իր չխոստովանած մեղքը կարող է ջնջել. անկարելիին է ձգտում: Ծաղրի եւ ոչ թե թողության է արժանի: Այս լսելով քահանան գնում է կնոջ մոտ և ինչ որ տեսնել ու լսել էր ասում է նրան, և երկչոտին ինչպես կարող էր հորդորում է խոստովանելու: Իսկ կինը, մի կողմ թողնելով իր ամոթը, այն մեղքը, որ այդքան ժամանակ թաքցրել էր, մեծ խոնարհությամբ ու արտասուքներով խոստովանում է: Այս տեսնելով՝ սատանան մեծ

աղաղակով ու գարշահոտությամբ լցնելով եկեղեցին անհայտացավ եւ այլևս չէրկաց:

## ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Այնպես պատահեց, որ մի անգամ ինչ-ինչ մարդիկ գինի էին ըմպում պանդոկում և արբած խոսում էին միմյանց հետ զանազան բաներից: Հետո զրույց բացվեց, թե ինչ է լինում այստեղից (աշխարհից) հեռանալուց հետո: Այդ ժամանակ նրանցից մեկն ասաց.

- Քահանաները զուր են խաղում մեզ հետ, որ ասում են, թե հոգիները այս կյանքից հետո կենդանի են: Այս լսելով՝ ամենքը ծիծաղում են: Եվ ահա մի մարդ՝ ուժեղ ու մեծահասակ, գալիս նստում է նրաց մոտ և հրամայում գինի բերեն, սկսում է ըմպել և հարցնում, թե ինչ են միմյանց հետ խոսում: Առաջինը պատասխանում է, թե.

- Մարդկանց հոգիների մասին ենք զրուցում, որ եթե մեկը կամենա իմ հոգին գնել, էժան կվաճառեի նրան և ինչ որ առնեի՝ հոժարությամբ ամենքի փոխարեն գինու գինը կվճարեի:

Եվ երբ ամենքը նրա անմտության վրա ծաղրում էին, հյուրն ասաց.

- Ես նման վաճառող եմ փնտրում և հոժար եմ գնել: Ասա՛, որքան ես վաճառում այն:

Իսկ նա իր բերան բացեց, ասաց.

- Այսքան

Եվ նույն ժամանակ գինը որոշեցին, և հոգիների գնողը դրամը տվեց: Եվ երբ ամենքն /արդեն/ ուրախությամբ ըմպում էին լի բաժակները, նա, որ իր հոգին վաճառել էր, ոչինչ չէր մտածում: Իսկ երբ երեկո եկավ, վաճառականն ասաց.

- Ժամանակն է, որպեսզի ամեն մեկն իր տուն գնա, բայց մինչ կգնանք, նախ դատաստան արեք: Եթե մեկը ձի գնի և այն բերանին սանձ ունենա, միթե՞ չի բռնի սանձն այն՝ ձիու հետ գնված: Ամենքը միաբերան պատասխանեցին, թե.

- Այդ այդպես է:

Եվ ահա հոգեծախ թշվառականն սկսեց ահից դողալ: Իսկ վաճառականը, բոլորի աչքերի առաջ վերցրեց նրան, բարձրացրեց վեր՝ հոգով եւ մարմնով

հանդերձ, և տարավ իր հետ դժոխք, քանզի նա սատանա էր՝ մարդու կերպարանքով, քանի որ էլ ով՞ կարող է մարդու հոգի գնել, եթե ոչ նա, ով միշտ և ամեն օր ջանում է կորստյան մատնել մարդու հոգին:

## ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի անապատական բնակվում էր միաբնակների վանքին մոտ: Երբ հիվանդացավ, լուր տվեց վանահորն՝ աղաչելով, որպեսզի գա իր մոտ և աստվածային Խորհուրդների հաղորդություն տա:

Իսկ հայրը, իր հետ վերցնելով մի լռակյաց եղբոր (վանական) գնաց, որպեսզի հաղորդություն տա նրան: Եվ մինչ գնում էին, մի ավազակ, զանգակի ծայներ լսելով, գնաց նրանց հետևից մինչ անապատավորի սենյակը և կանգնեց դռան առջեւ՝ իրեն անարժան համարելով՝ մտնելու նման սուրբ մարդու խուցը: Եվ երբ անապատավորը խոստովանեց ու հաղորվեց, ավազակը, դռնից ոչ հետու կանգնած, իր սրտի խոնարհությամբ հանդերձ ասաց.

- Երանի՜ թե ես էլ քեզ պես լինեի:

Իսկ անապատավորը սրտի հպարտությամբ և ինքնահավանությամբ ասաց.

- Իրոք՞ ուզում էիր, որ ինձ պես լինեիր:

Այդ ժամանակ այն լռակյաց, հոգեզարդ եղբայրը, որ իր սրտում ծածուկ Աստծո գաղտնիքը գիտեր, սկսեց դառնապես լալ: Եվ երբ վանահայրն այդ եղբոր հետ վեր կացավ գնաց, այն ավազակը հեռվից գնում նրանց հետևից՝ աղոթելով Աստծուն, որ տա իրեն ճշմարտության զղջումն ու ուղիղ գործեր, քանի որ հաստատել էր իր մտքում՝ հոր առաջ խոստովանել և ավելին չմեղանչել, այլ ապաշխարել իր մեղքերի համար:

Եվ մինչ վազում էր, ընկավ և իսկույն մեռավ: Այս տեսնելով եղբայրն այն հույժ ուրախանալով՝ սկսեց ծիծաղել:

Երբ վանք եկան, հայրը հարցրեց եղբորը, թե.

- Ինչու՞ էիր այդպես լուռ քայլում:

Եվ պատասխան տվեց.

- Մի օր հրամայեցիր ինձ լռել և ես այն օրից ի վեր լուռ եմ, բացառությամբ, երբ ինձ որևէ բան են հարցնում՝ խոսում եմ:

- Ապա ինչո՞ւ էիր լաց լինում, երբ այն սուրբ անապատավորին հարողորդություն էի տալիս և ինչո՞ւ ծիծաղեցիր, երբ այն չարագործ ավազակը մեր ետևից վազում էր՝ կամենալով մեզ կողոպտել կամ սպանել, և իր այդ մեղքի համար էլ մեռավ:

Պատասխան տվեց եղբայրը.

- Հայր՛, իմ լալու պատճառն այս էր. քանի որ երբ ճգնավորին հաղորդություն տվիր, այդ ժամանակ ավազակը դռան ետևում կանգնած իր սրտում ասաց. » երանի քո փոխարեն ես լինեի«: Իսկ ճգնավորը սրտի հպարտությամբ պատասխանեց. »Այդ հոժարական ես խնդրում«:

Ապա մեռավ և դատապարտվեց, դրա համար էլ լաց եղա: Բայց ավազակը, որ մեր ետևից էր գալիս, հաստատուն բան ուներ մտքում՝ խոստովանել և ոչ թե կողոպտել մեզ կամ սպանել: Եվ երբ վազում էր, ընկավ և մեռավ: Հրեշտակներն ուրախությամբ նրա հոգին վերցրեցին, երկինք տարան, քանի որ նրա զոջունն այնքան էր, որ եւ՛ ժամանակավոր և՛ հավիտենական պատիժը ջնջվեց:

## ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեք նշանավոր ավազակներ կային, որոնք բազում տեղերում բազում չարիքներ էին գործել: Օրերից մի օր սրանք գալիս են մի վանք և որեւէ կերակուր խնդրում: Վանքի վերակացուն էլ խստորեն կշտամբում է նրանց՝ ասելով.

- Դուք՝ արյունարբու գողեր ու ավազակներ, ոչ միայն չեք ամաչում ուրիշների վաստակը հափշտակելուց, այլև համարձակվում եք անամոթաբար Աստծո ծառաներին տրված ողորմությունն ուտել:

Արժանի չեք երկրի վրա ապրելու, քանի որ ոչ Աստուծուց եք երկնչում, ոչ էլ մարդկանցից ամաչում: Հեռացե՛ք ձեր չար գործերով հանդերձ և այլևս չհանդգնեք այստեղ վերադառնալ:

Իսկ նրանք զայրացած ու խիստ սրտնեղված ետ դարձան:

Եվ ահա նույն օրը վանահայրն ինչ-որ տեղից վերադառնում է՝ հետն ունենալով մի քանի նկանակ եւ մի շիշ գինի, և վերակացուից լսելով, թե ինչպիսի պատասխան էր տվել ավազակներին, հանդիմանում է նրան ասելով՝ թե.

- Անիրավորներն ես դա արել, քանզի մեղավորները մարդասիրությամբ և քաղցրությամբ ավելի դյուրությամբ են դարձի գալիս, քան սպառնալիքներով ու խստությամբ, որովհուոև Քրիստոս Աստված վարդապետը մեր, Ում Ավետարանը խոստացաք պահել, ասել է.

- Բժիշկն առողջների համար չէ , այլ՝ հիվանդների: Չեկա կանչելու արդարներին, այլ մեղավորներին: Այդ պատճառով էլ շատ անգամ մեղավորների հետ էր ուտում: Արդ, քանի որ այդ արել ես ընդդեմ սիրո և Քրիստոսի պատվիրանի, սուրբ հնազանդության համար հրամայում եմ քեզ, որ հենց հիմա առնես այս նկանակն ու շշով գինին, շուտափույթ փնտրես ավազակներին և գտնելով նրանց՝ ընծայես իմ անունից: Եվ ապա՝ ծնկելով նրանց առաջ, խոնարհությամբ խոստովանես քո հանցանքը, որ նման տրտմությամբ ու խստությամբ վարվեցիր նրանց հետ: Եվ կաղաչես նրանց, որպեսզի այլևս այդպիսի չար գործեր չանեն, այլ երկյուղեն Տեր Աստուծուց և ընկերներին էլ չվնասեն: Եվ եթե այս անեն, խոստանում եմ բոլոր նրանց մարմնական պետքերը հոգալ: Այս կասես նրանց աւ այնտեղից կվերադառնաս:

Եվ երբ սա գնաց փնտրելու ավազակներին, վանահայրը եկավ աղոթքի կանգնեց առ Աստված, որպեսզի նրանց գղջում և ապաշխարության դարձ տա:

Արդ, երբ ավազակներն ուտում էին այն ողորմությունը, որն ուղարկել էր նրանց Աստծո մարդը, սկսեցին միմյանց հետ խոսել՝ ասելով. « Վայ՛ մեզ՝ եղկելիներիս և թշվառներիս, թե դժոխքի որքան մեծ ու անտանելի տանջանքներ են մեզ սպասում, որ ոչ միայն կողոպտում ենք մարդկանց ստացվածքներից, այլև զրկում ենք կյանքից, և սակայն, այսքան մեծամեծ չարիքներից և մարդասպանություններից հետո ամենևին ոչ Աստուծուց երկյուղ ունենք և ոչ էլ խղճմտանք;

Իսկ ահա այդ սուրբ եղբայրը, որ եկել է մեզ մոտ, այնքան փոքր մի բանի համար, որ մեզ արդարորեն, մեր իսկ չարությանից դրդված՝ մեզ հանդիմանել էր, իրեն այսքան խոնարհեցրեց և դատապարտեց՝ մեր առաջելու, և մանավանդ՝ նման առաքինի և սուրբ այրը մեզ առատ խոստումներ պարզեց, հաց ու գինով մեր պետքերը լցրեց: Արդարև, դրանք են սրբերն Աստծո. որոնք երկինքը պիտի ժառանգեն: Իսկ մենք՝ կորստյան որդիներս, օրըստօրե ավելացնում ենք հավիտենական դժոխքի մեր տանջանքերը, չգիտենք, թե կարող ենք ողորմություն գտնել Աստծուց՝ այսքան չար ու զազիր մեր գործերի համար:

Նրացից մեկը, երբ նման բաներ էր խոսում, մյուս երկուսն ասում են. «Այդ դեպքում ինչ՞ անենք»: Եվ նա ասում է. «Գնանք՝ Աստծո մարդու մոտ և եթե նա մեզ հույս տա, որ մենք՝ նման չարագործներս, կարող ենք ողորմություն գտնել Աստծուց: Մեզ մի անգամ պատվիրածը կանենք, միայն թե կարողանանք մեր հոգիներն ազատել դժոխքի գեհենից:

Հավանություն տալով սրան՝ երեքն էլ մեկ առ մեկ գնում են Աստծո մարդու մոտ, ասում.

— Հայր՛, մենք մեր մեծամեծ չարագործությունների պատճառով տարակուսանքի մեջ ենք՝ արդյոք՞ կարող ենք Աստծուց ողորմություն գտնել: Բայց եթե դու մեզ հուսադրես, թե Աստված երես չի դարձնի մեզնից, ահավասիկ, պատրաստ ենք քեզ հետ ապաշխարել, և այն ամենին, ինչ որ մի անգամ պատվիրես մեզ, կամենում ենք հնազանդ լինել: Իսկ Աստծո մարդը նրանց սիրով ու քաղցրությամբ ընդունեց և զանազան ապացույցներ մեջբերելով՝ հավաստիացրեց նրանց Աստծուց մարդասիրություն գտնելու մասին: Ինչպես նաև խոստացավ նրանց՝ Տեր Աստծո շնորհն ու ողորմությունը գտնելու մասին՝ ուսուցանելով նրանց, թե որքան մեծ է Աստծո մարդասիրությունը մեր անթիվ մեղքերի դեմ. թեև անսահման են՝ հաղթահարում են և թաքցվում և մանավանդ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեղավորների համար աշխարհ եկավ, որպեսզի փրկի նրանց:

Արդ, ավազակները հրաժարվելով աշխարհից ու իրենց չար գործերից՝ ընդունելի եղան Տեր Աստծուն եւ Նրանով զգեստավորվեցին ու սրտով կենդանացան: Նրանցից երկուսը կարճ ժամանակի ընթացքում գովելի վարք ձեռք բերեցին, հրավիրվելով Տիրոջից՝ այս աշխարհից տեղափոխվեցին: Իսկ երրորդը երկար ապրեց, եւ մշտապես, մտովի անցկացնելով իր ծանր ու զանազան մեղքերը,



անչափ ապաշխարեց: Ընդհուպ հիսուն տարի՝ որքան, որ ապրում էր, հացով ու ջրով էր միայն անցկացնում, միշտ բոկոտն էր շրջում և գիշերն աղոթքի կանգնում և մինչև առավոտ չէր քնում: Եվ ապա այդպիսի ճգնասեր առաքինությամբ առ Աստված, հրեշտակների առաջնորդությամբ, տեղափոխվեց:

265 Բ

### Ողջույն քեզ, Մարիամ՝ ասելու մասին

Մի խիստ մեղսասեր մարդ սովոր էր մշտապես փառաբանելու կույս Մարիամին եւ իր սովորական աղոթքն էլ նրան մատուցելու: Մի օր, երբ անապատում շատ քաղցած էր, նրան երևաց Սբ. Աստվածածինը՝ վայելչագեղ կույսերով հանդերձ, բերեց նրան ազնվական կերակուրներ, բայց գարշելի ու կեղտոտ ամանով: Եվ ասաց նրան.

- Կեր՛ սա:

Իսկ նա ասաց.

- Կերակուրն այդ բարի ու գեղեցիկ է, բայց չեմ կարող ուտել այդ գարշելի ամանի պատճառով:

Այդ ժամանակ ամենօրինյալ Տիրամայրն ասաց նրան.

- Փառաբանությունը, որ ինձ մատուցում ես, բարի է ու գեղեցիկ, բայց սիրտդ՝ անմաքուր, որի համար էլ չեմ սիրում և չեմ ընդունում այն:

Դրանից հետո (մարդը) ապաշխարությամբ սրբվեց:

### ԸՆԿԵՐՈՋԸ ՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ Հովհաննես առաքյալն ու Եփեսոսի ավետարանիչն ապրեց մինչև խոր ծերություն՝ այնքան, որ աշակերտներն իրենց ձեռքերի վրա էին նրան եկեղեցի տանում: Եվ քանիցս, ժողովարանում նրանց քարոզելիս, ուրիշ ոչինչ չէր ասում,

միայն հիշեցնում էր. «Որոյակներ՝ սիրեցեք միմյանց»: Իսկ եղբայրները, որ իր հետ էին, զարմանալով, որ նույն բանն է կրկնում, ասում են նրան.

- Վարդապետ՝ ինչու՞ ես մշտապես նույն բանը կրկնում:

Պատասխանում է.

-Այն պատճառով, որ սա Տիրոջ պատվիրանն է, և եթե միայն սա կատարեցիր, բավական է:

302 Ա

### ՎԱՇԵՒ (ՇԱՀԻ) ՄԱՍԻՆ

Մի վաշխառու իր կնոջ հետ անկողնում քնած էր և ահա հանկարծակի քնից զարթնելով՝ ելնում է անկողնուց: Կինը հարցնում է նրան, թե՞

- Ուր՞ ես այդքան շտապում:

Պատասխան է տալիս, թե՞

- Այժմ տարված եմ Աստծո դատաստանով, և այնտեղ այնքան անբաստանություններ բարդեցին իմ վրա, մինչև որ այլևս չկաչողացա ոչ մի խոսք ասել:

Այս ասելով՝ վերցրեց իր պատառոտված հանդերձները, ելավ տնից և փախավ վանք, որտեղ երբեք չկարողացան նրան ապաշխարության բերել:

Հետո նրան ազգականները վանքից վերցրեցին եւ տուն տարան: Եվ երբ գետի միջով անցնում էին, տեսան, որ մի արագընթաց նավ իրենց է մոտենում: Երբ վաշխառուն նայեց, տեսավ, որ նավը լի էր դևերով, և նրա համար էր գալիս, որ իրեն տանի հավիտենական տանջանքների: Եվ երբ նավը մոտեցավ նրանց, անմիջապես դևերը խլեցին նրան բռնությամբ նրանցից (ազգականներից) և իրենց նավը տանելով՝ իսկույն նրանց աչքերից աներևութացան՝ նավով հանդերձ: Արդ, վաշխառուի օրինակից պարզ է դառնում, որ ինչպես այս կյանքում ես առնում, նույնպես էլ հանդերձյալում պատիժն է տրվում:

313 Ա

## ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի աշխարհական մարդ ականատես եղավ մի քահանայի, որ շնություն էր անում, սակայն, երբ հաջորդ օրը քահանան Պատարագ էր մատուցում, հույսով, առանց երկմտելու գնաց նրա մոտ և նրա ձեռքից հաղորվեց: Եվ հաղորդությունից հետո քահանայից խնդրում է, որ իր բորոտությամբ պատված ճակատին խաչակնքի: Երբ խաչակնքեց, բորոտությունը կեղևի պես բացվելով՝ ընկավ և ճակատը առողջացավ:

Հիրավի, հիանալի են Աստծո գործերը և դատաստանն էլ՝ լի: Մեղանչել էր (քահանան), սակայն չմնաց առանց քահանայագործության շնորհի. թեպետ քահանան դատվելու պատճառ էր ծնել, բայց ուներ զորություն, որպեսզի իմանանք, որ երբ քահանային ենք մոտենում՝ ոչ թե մարդու, այլ՝ Աստծուն ենք մոտենում, Ով նրանց (քահանաների) ձեռքով մեզ շնորհներ է պարգևում և սրբում է մեզ: Նա, ով նրան (քահանաներին) հավատով է մոտենում, ինչ որ խնդրում է՝ կընդունվի: Եվ որ՝ քահանաների մեղքերը չեն վնասում հավատացյալներին և ոչ էլ քահանայի վարքը որևէ կերպ օգնում է մեր հավատին, քանզի քահանան ըստ էության մարդ է և օժտված տկարությամբ: (Նա) չի կարող օգնել, ինչպես որ դու: Դու նրան հավասար ես անկարությամբ:

## ԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


\*\*\*

**Մեր Տեր Ջիսուս Քրիստոս փրկության Ավետարանում պատգամում է. «Ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ(6) 21). և իսկապես դա այդպես է:**

Մեծ ունեցվածքի տեր մի մարդ՝ չափազանց ազահ, արծաթասեր ու անհագ, որը երբեք աղքատներին ողորմություն չէր տալիս, բարեգործություն չէր անում, ոչ էլ կարոտյալների պետքերն էր հոգում, այնպես պատահեց, որ հանկարծակի մեռավ: Նրա բարեկամներն ու ազգականները կարգադրեցին նրան հերձել, որպեսզի տեսնեն, թե ինչն էր նրա հանկարծահաս մահվան պատճառը: Եվ երբ հերձեցին նրան և


սիրտը չգտան, սարսափահար եղան: Ապա բոլորն էլ գնացին այն սենյակը, որտեղ գանձն էր պահում, բացեցին պահարանը և ահա հանգուցյալ մարդու սիրտը գտան սատանայի ձեռքերում, որ վիշապակերպ նստել և պատառոտում էր այն: Եվ նայողներին ասաց.

- Այս ոսկին ու արծաթն այն գինն են, որոնց դիմաց ձեր բարեկամը վաճառել է ինձ իր սիրտը. իրավամբ այն իմ սեփականությունն է, ինչ կամենամ, այն էլ կամենմ:



Մի ծերունի քաղաք գնաց՝ իր ձեռագործ աշխատանքները վաճառելու: Պատահեց, որ մահամերձ վիճակում գտնվող մի մեծահարուստի դռան առջև նստեց: Եվ ահա տեսավ սևակերպ ձիեր և սևադեմ ու սարսափազդու հեծյալներ, որոնցից յուրաքանչյուրն իր ձեռքում հրեղեն գավազան ուներ: Հասնելով մեծահարուստի դռանը, ձիերից իջնելով՝ բոլորն էլ արագորեն տուն մտան: Հիվանդը, նրանց տեսնելով, սկսեց Աստծուն աղաղակել. «Տե՛ր, օգնի՛ր ինձ»: Իսկ նրանք ասացին.


—Ա՞յժմ հիշեցիր Աստծուն, երբ արեգակը մայր մտավ: Ինչո՞ւ Նրան չէիր փնտրում կյանքիդ բոլոր օրերին, քանի դեռ արևը ծագում էր: Այլևս ո՛չ զիույսի, ո՛չ էլ մխիթարության բաժին կա:



Մի մեծահարուստ շատ ունեցվածք էր դիզել, բայց ոչ առանց մեղքերի: Երբ վերջին շնչին հասավ, մերձավորները նրան հորդորում էին, որպեսզի մտածի իր հոգու փրկության մասին: Բայց նա նման խոսքեր լսել չէր ախորժում, այլ մանավանդ մահճի մեջ այս ու այն կողմ շրջվելով՝ ավստում էր, ի խորոց սրտի լացում, կոծում և ողորմելի ձայնով ողբում՝ ասելով.

— Ավա՜ղ, ի՞նչ մեծ չարչարանքով ջանացի, որ ունեցվածք ձեռք բերեմ, և ահավասիկ ուրիշները պիտի ժառանգեն ու վայելեն իմ գանձերը: Օ՛, ունեցվածք իմ, օ՛, հարստություն իմ, օ՛, մխիթարություն իմ սրտի, ո՞ւմ ձեռքը պիտ ընկնեք, ո՞ւմ պիտ թողնեմ ձեզ:

Եվ այսպիսի խոսքեր ասելով՝ վախճանվեց:



Մի կին կեղծ աստվածպաշտությամբ էր ապրում. գիշերուզօր աղոթում էր և անդադար ուխտատեղիներ այցելում: Այսպիսի կերպարանված առաքինությամբ ապրելով՝ մարդկանցից բազմաթիվ իրեր էր վերցնում և մշտապես շատ ոսկեղեն հավաքում, և ինչ որ աստվածասեր քրիստոնյաները տալիս էին՝ քրիստոնյա գերիներին ազատելու համար, նա քսակի մեջ էր դնում, իսկ ինչ տալիս էին կարոտյալների պետքերի համար, արկղի մեջ էր պահում: Այդ կինն իր սենյակում խորը փոս էր փորել, այնտեղ մի մեծ կարաս տեղադրել: Իրեն տրված իրերն այդտեղ էր պահում, վրան էլ քար դնում: Ավա՜ղ անիծյալ ազահությանը, թե ինչպե՛ս է կուրացնում մարդկանց և խավարն ընկղմում: Բայց կարճ ասած՝ երբ կարասը լցվեց դրամով, և կնոջ մահվան ժամանակն էլ հասավ, ինչպես որ մեռած էր աստվածատուր

հոգով, նաև մարմնով մեռավ ու թաղվեց: Թաղման արարողակարգից հետո քահանաները կնոջն սպասավորած աղջկան հարցրին.

—Քո տիկինն ի՞նչ էր անում այդքան դրամը, որ նրան էին տալիս:

Նա էլ պատասխանեց.

—Երբեք չեմ տեսել, որ աղքատներին ինչ-որ բան տար, և չգիտեմ, թե որտե՛ղ էր պահում այն դրամը, որ մարդկանցից էր վերցնում: Միայն գիտեմ, որ ինչ նրան տալիս էին, սենյակ էր տանում և այլևս դուրս չէր հանում: Քահանաները, այս լսելով, զարմացան և փութաջանորեն սկսեցին փնտրել և ահա լսեցին դրամի ձայնը: Քարը գլորելով՝ մեծ քանակությամբ դրամ գտան, և զարմանալով կնոջ խորամանկության վրա՝ այս ամենը հայտնեցին եպիսկոպոսին: Իսկ եպիսկոպոսը, սաստիկ բարկանալով, հրամայեց բացել գերեզմանը և ամբողջ դրամը թափել մեռած մարմնի վրա՝ ասելով.

—Ինչ հավաքեցիր, քե՛զ թող լինի, իսկ Քրիստոսի աղքատներին ոչինչ թող չպակասի:

Դրանից հետո մի քանի գիշեր գերեզմանից ձայներ էին լսվում և սաստիկ լաց ու կոծ: Եվ այս ողբերի մեջ պարզ լսելի եղավ հետևյալ ձայնը. «Վա՛յ ինձ՝ եղկելիիս, վա՛յ ինձ՝ ամենաթշվառիս, քանզի այս ոսկին այրում և տոչորում է ոսկորներս»:

Այսպիսի ձայներ լսվեցին երեք գիշեր ու ցերեկ: Եվ շրջակա մարդիկ, չկարողանալով տանել այն, գնացին քահանայի մոտ և նրա հրամանով բացելով տապանը՝ տեսան, թե ինչպե՛ս էր ոսկին հալվել, կարծես հնոցի մեջ, իսկ կնոջ բերանը՝ պատվել կրակե բոցով: Այնժամ քահանան աղոթեց Աստծուն, որ նրա մարմնի տանջանքները թեթևանան, որովհետև նրա չարությունը հայտնի էր դարձել մարդկանց առ ի զգուշություն: Այնուհետև ծածկեցին գերեզմանը, և կնոջ ձայնն այլևս չլսվեց:





## *ԱՂՈՐՔԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Սատանան գեղեցիկ երիտասարդի կերպարանքով ծառայում էր մի զորականի, և երբ իր գեղեցիկ հասակի ու խոսվածքի համար վերջինիս հաճելի եղավ, սկսեց է՛լ ավելի հոժարական, երկյուղածությամբ ու մտերմությամբ ծառայել, իր տիրոջ զարմանքը հարուցելու աստիճան: Ամեն անգամ, երբ զորականը ձի էր նստում կամ ձիուց իջնում, ճիշտ ժամանակին գալիս ու պատրաստ կանգնում էր և միշտ պատկառանքով, խոնարհությամբ և խոհեմությամբ սպասավորում էր նրան:

Մի օր, մինչ նրանք երկուսով գնում էին և մոտեցան մի ընդարձակ գետի, զորականը, ետ նայելով, տեսավ թշնամիների մեծ բազմություն, որ իրեն էր հետապնդում: Եվ ծառային ասաց.

— Ահավասիկ կործանվեցինք, քանի որ թշնամիներս հասան ինձ, իսկ մեր առջևում անեզր գետն է, փախուստի տեղ չկա. կա՛մ կսպանեն ինձ, կա՛մ կբռնեն: Ի՞նչ անեն:

Ծառան ասաց.

— Տե՛ր, մի՛ երկնչիր, որովհետև այս գետն անցնելու տեղը քաջ գիտեմ: Ե՛կ իմ ետևից, և կփախչենք:

— Այս գետը ոչ ոք չի կարող անցնել, — ասաց տերը:

Սակայն փախչելու հույսով գնաց ծառայի ետևից և անվնաս անցավ:

Արդ, երբ դեմ հանդիման կանգնեցին՝ սրանք գետի մի կողմում, նրանք էլ՝ մյուս, թշնամիները զարմացած ասացին.

\_Ո՞վ է երբևէ լսել, թե այս գետը մեկն անցնի. ոչ այլ ինչ է, բայց միայն որ սատանան նրան անցկացրեց:

Եվ այսպես տուն վերադարձան:

Դրանից հետո զորականի կինը խիստ հիվանդացավ, այնպես որ բժիշկների բոլոր դեղերն անզոր էին: Դևն իր տիրոջն ասաց.

\_Եթե տիկինն առյուծի կաթով օծվի, այն օգուտ կլինի նրան, և կառողջանա:

\_Որտեղի՞ց կարող ենք գտնել այն,- հարցրեց տերը:

\_Ես կբերեմ,- պատասխանեց դևը:

Այդ ասելուց հետո գնա և մի ժամ հետո վերադարձավ՝ կաթով լի մի աման բերելով իր հետ, որով երբ կինն օծվեց, անմիջապես սկսեց թեթևություն զգալ և առողջացավ:

Տերը նրան հարցրեց.

\_Որտեղի՞ց այս կաթն այսքան արագ բերեցիր:

\_Արաբիո լեռներից,- պատասխանեց նա,- քանզի այստեղից Արաբիա գնացի, առյուծին այրի մեջ բռնեցի, ձագին հեռու վանեցի, մորը կթեցի և քեզ մոտ դարձա:

Այս լսելով՝ տերը զարմացավ և նրան ասաց.

\_Ո՞վ ես դու:

\_Մի՛ տրտմիր այս բանի համար, քո ծառան եմ,- պատասխան տվեց նա:

Սակայն երբ ստիպեց, հայտնեց՝ նրան ասելով.

\_Ես սատանա եմ, մեկը նրանցից, որ Բելիարի հետ երկնքից ընկան:

Այն ժամանակ տերն է՛լ ավելի սարսափեց.

\_Եթե դու ի բնե սատանա ես, ինչո՞ւ ես մարդուն այսքան մտերմաբար ծառայում:

\_Ինձ համար մեծ մխիթարություն է լինել մարդու որդիների հետ,- պատասխանեց դևը:



Եվ տերն ասաց.

\_Այլևս չեմ համարձակվում թույլ տալ, որպեսզի ծառայես ինձ:

\_Ստույգ այս իմացիր,- ասաց դևը,- որ եթե ինձ քեզ մոտ պահես, իմ կողմից կամ իմ պատճառով երբեք չարիք չի պատահի քեզ:

Ջորականն ասաց.

\_Չեմ համարձակվում, բայց ինչ խնդրես քո ծառայության դիմաց, քեզ կտամ, մինչև իսկ իմ ունեցվածքի կեսը հոժար կամքով քեզ կբաշխեմ, քանի որ երբեք մարդը մարդուն այսքան հավատարիմ չի ծառայել և օգտակար եղել, ինչպես դու ինձ, որովհետև քեզնով փրկվեցի մահից, և քեզնով իմ կինն առողջացավ:

Այնժամ դևն ասաց.


\_Քանի որ քեզ հետ չեմ կարող այլևս ապրել, իմ վաստակի փոխարեն քեզնից ոչինչ չեմ ուզում, բայց միայն հինգ ոսկի:

Եվ այն առնելով՝ վերադարձրեց տիրոջը.


\_Խնդրում եմ քեզ, որ սրանով զանգակ գնես և հրամայես կախել աղքատ ու անխնամ այն եկեղեցու տանիքից, որպեսզի նրա միջոցով թերևս կիրակի օրերին քրիստոնյաները հավաքվեն աստվածային պաշտամունքի:

Այս ասելով՝ անհայտացավ:

Արդ, սատանան այս խնդրանքը ներկայացրեց նրան հետևյալ պատճառով. մարդիկ մինչ այդ վաղ առավոտյան էին գալիս եկեղեցի և աղոթում՝ սպասելով սուրբ պատարագին, քանզի վախենում էին, թե միգուցե քնով անցնեն և պատարագից զրկվեն, իսկ այժմ զանգակի ձայնը լսելուց հետո են գալիս եկեղեցի և ծուլանում աղոթելու մեջ:



Սրբասեր ու աստվածահաճո մի քարոզիչ էշով այս ու այն կողմ էր գնում՝ կենաց խոսքը սերմանելու: Արդ, մի օր աղոթելու համար եկեղեցի մտնելով՝ էշը թողեց դռանը, և մինչև «Հայր մեր»-ն ասաց, քանիցս տարվեց մտքերով՝ խորհելով էշի մասին, թե միգուցե մեկն այն գողանա, և այսպիսի այլ մտքեր էլ խափանում էին նրա աղոթքը: Այս տեսնելով՝ անմիջապես ելավ եկեղեցուց և էժան գնով վաճառեց էշը՝ չկամենալով, որ այսուհետ աղոթքի ժամանակ միտքը զբաղվի և հեռանա Աստծուց:



### *ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Կուսակրոն ու առաքինասեր մի քահանա, աղոթելիս մտահափշտակության մեջ ընկնելով, հոգով տեղափոխվեց մի մեծ, լայնատարած ու հորդահոս գետի մոտ: Նայելով գետն անցնող մարդկանց՝ տեսավ բեռնակիր եղբայրների, ովքեր գետն էին մտնում և հորդահոս ջրերի մեջ անմիջապես խեղդվում ու կորչում: Ոմանք հասնում էին մինչև գետի սկզբնամասն ու կորստյան մատնվում, ոմանք՝ մինչև կեսը, ոմանք էլ՝ մինչև եզրը: Նրանք ամենքն էլ իրենց զանազան բեռների պատճառով էին գետում խեղդվում՝ առանց մեկի օգնության:

Արդ, կրոնավորը, այսպիսի վտանգ տեսնելով, խիստ ցավում էր նրանց համար: Ապա երևում էին այլ եղբայրներ՝ առանց բեռի, որոնց վրա

միայն սուրբ աղքատություն էր տեսնվում, ովքեր, գետը մտնելով, անվնաս ու անվտանգ անցնում էին:


Վանահայրը հոգով իմանալով, թե ի՞նչ էր տեսել կրոնավորը, նրա գալուն պես կանչեց իր մոտ ու հարցրեց.

— Ասա՛ ինձ, ի՞նչ ես տեսել:

Նա էլ ամեն ինչ հերթով պատմեց:

Հայրը նրան ասաց.

— Ինչ որ տեսել ես, ճշմարտապես այդպես է: Գետն այս աշխարհն է, գետին կուլ գնացած մարդիկ նրանք են, ովքեր ավետարանի խոստովանությանն ու կանավոր աղքատությանը չեն հետևում: Իսկ նրանք, ովքեր գետն անվնաս անցնում են, հոգեղնկալ կրոնավորներն են, ովքեր երկրավոր ու մարմնավոր բաներ չեն սիրում, ո՛չ փնտրում են, ո՛չ էլ ունեն, այլ սակավ կերակրով ու հագուստով են բավականանում, խաչի վրա մերկացյալ Քրիստոսի ետևից են ընթանում, Նրա խաչին և հնազանդության թեթև ու քաղցր լուծին հանապազ համբերում, որի շնորհիվ էլ երկրավորների միջից ոյուրությանբ երկնավորների մեջ են փոխադրվում և այստեղից անվնաս երկինք հասնում:



*ԱՆՁՂՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*


Մի մարդ կյանքի բոլոր օրերին գարշելի արարքներ էր կատարում և չէր կամենում ապաշխարել, իսկ երբ նրան խրատ էին տալիս, սովորաբար պարծենալով ասում էր.

— Իմ մահվան վերջնակետում միայն երեք բառ կասեմ և կփրկվեմ:

Արդ, այս մարդը, որ դեռ չէր ծերացել, մինչ ձի հեծած գնում էր, ելավ մի խարխուլված կամրջի վրա: Հանկարծ ձին սկսեց վտանգի ենթարկվել: Տերը փորձեց նրան վեր հանել, սակայն ապարդյուն: Եվ տեսնելով, որ ձին անկասկած ջուրն էր ընկնելու, բաց թողնելով՝ աղաղակեց.

— Սատանա՛, ա՛ռ ամենը:

Եվ այսպես, այս երեք բառերով էլ ընկավ ջուրն ու կորստյան մատնվեց:



### *ԱՆԻՐԱՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*


Մի մեծահարուստ իր տունը վարձով տվեց աղքատ մեկի և նրան կողոպտել կամենալով՝ տանը թողեց ամաններ, որոնցից մի քանիսը ձեթով լի էր, իսկ մյուսները՝ կիսատ: Երբ տունը վերադարձնելու պայմանավորված ժամկետը լրացավ, մեծահարուստը եկավ՝ ամաններն ստուգելու: Տեսնելով թերիները՝ աղքատին գողության համար զրպարտեց: Երբ աղքատը դատարան կանչվեց, փրկվելու այլ ելք չկար, բացի միայն հատուցելուց: Իսկ մեկը, որի անունը տնամկների Ապավեն էր, աղքատին մի կողմ տարավ ու հարցրեց.

— Ամեն՞դ ես, թե՞ պարտապան:

Պատասխանեց՝ անմեղ:

Ապա նրա հետ վերադարձավ դատարան և համառորեն պահանջում էր, որ չափեն այն ամանները՝ ավելացնելով, որ եթե նույնքան մրուր գտնվի կիսատների մեջ, որքան լի ամանների, աղքատը թող

փոխհատուցի, իսկ եթե ոչ՝ թող ազատվի: Եվ պարզվեց, որ կարասները կիսատ էին: Այսպես, աղքատն ազատվեց, իսկ մեծահարուստը դատապարտվեց:



### *ԱՆՅՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի եղբայր վանահորից վանքից երբեք չելնելու պատվեր էր ստացել, բացի անհրաժեշտության պարագայից: Իսկ նա, մշտապես այլևայլ պատճառներ գտնելով, վանահոր հրամանով քաղաք և ուրիշ տեղեր էր գնում, ուր որ հաճելի էր թվում իրեն:

Մի օր դիվահարի հանդիպեց և մարդկանց աղաչանքներից հարկադրվեց դեռ հանել: Հրաժարվել չկարողանալով՝ եկավ դիվահարի մոտ և, ընթերցելով Հովհաննեսի Ավետարանի սկիզբն ու կատարելով այլ աղոթքներ, դիմեց դեհին՝ ասելով.


—Սուրբ հնազանդության զորությամբ հրաման եմ տալիս քեզ, որպեսզի այս մարդուց ելնես:

Դեհն այսահարի բերանով պատասխանեց.

—Սուրբ հնազանդության զորությամբ ի՞նչ ես կամենում հրամայել ինձ, դու որ երբեք ճշմարիտ հնազանդ չես եղել:

Եվ վանականն անոթահար հեռացավ:

Այստեղից հայտնի է, որ եթե նա ճշմարտապես հնազանդ լիներ իր առաջնորդին, դեհն էլ ստուգապես կհնազանդվեր իրեն:



Մի տանուտեր հավատարիմ ու պիտանի ծառա ուներ, ում իր ողջ ունեցվածքի վրա էր կարգել: Մի օր երկուսով զրուցում էին Ադամի անհնազանդության և ընդդեմ Աստծո պատվիրանի՝ պտղի ճաշակման մասին: Ծառան էլ, Ադամի այդպիսի անհաստատ մտքի վրա զայրանալով, ասաց.

—Տե՛ր, Աստծո պարագային ոչինչ չուներմ ասելու, բայց եթե դու ինձ սաստիկ հրաման տայիր, երբեք զանց չէի առնի:

Տերը լռեց: Օրեր հետո, երբ ծառան զգոնության մեջ չէր և Ադամի վերաբերյալ ասածները չէր հիշում, նրան փոքր սափոր տվեց, որ ծածկված էր, բայց ոչ փակված, և ասաց.


—Քեզ հանձնարարում եմ պահել այս ամանը, բայց եթե այն բացես, ինձ մոտ եղած քո ամբողջ վարձից և խնամքից հավիտյան կզրկվես:

Եվ այս մասին բազմաթիվ անգամներ նրան հիշեցրեց:

Իսկ ծառան, գնալով սենյակ, միառժամանակ սկսեց տարուբերվել զանազան մտքերի ու փորձությունների հողմով՝ կամենալով իմանալ, թե ի՞նչ կա սափորի մեջ: Եվ բազմիցս նայելով ու շրջելով՝ խորհեց. «Ի՞նչ պիտի լինի, եթե բացեմ, այստեղ մեռակ եմ, ոչ ոք ինձ չի տեսնում: Եթե մեկն ինձ հարցնի, կուրանամ, քանի որ վկա չկա, որ ինձ դատապարտի»: Ապա սափորը բացեց, և թռչունը, որ մեջն էր, փախավ: Այդ ժամանակ հույժ տրտմեց, որովհետև մտահղացումը հասկացավ: Երբ տերը հարցրեց նրան ամանի մասին, ընկնելով նրա ոտքերը՝ թողություն էր հայցում, ինչին սակայն չարժանացավ: Տերը նրան ասաց.

—Ո՞վ ծառա, չար և ինքնահավան, դու որ մեր նախահորն անհնազանդության համար դատում էիր՝ քո մտքի

հաստատակամությունը գովելով իմ առաջ, քեզ դատապարտեցիր: Արդ, հեռո՛ւ գնա ինձնից, որպեսզի իմ երեսն այլևս չտեսնես:



Մեծահարուստ ու ազնվատոհմիկ մի մարդ արժանապատիվ ու շատ սիրելի կին ուներ: Մի օր, մինչդեռ միմյանց հետ խոսում էին Եվայի մասին, կինը, կանանց սովորության համաձայն, պախարակում էր Եվային և դատապարտում անհաստատակամության համար, որ իր չնչին ցանկությունը կատարելով՝ ողջ մարդկությանն այսպիսի տառապանքներ ու թշվառություն էր բերել: Ամուսինը կնոջն ասաց.

—Մի՛ դատիր նրան, որովհետև դու նույնը կանեիր նման փորձության ժամանակ: Ես կամենում եմ քեզ թեթևագույնը պատվիրել, և հանուն իմ սիրո չես կարողանալու այն պահել:

—Ո՞րն է այդ պատվիրանը, — հարցրեց նա:

—Այն օրը, երբ բաղնիքում լողանաս, — ասաց ամուսինը, — դրանից հետո ոտաբոբիկ չմտնես տիղմի մեջ, որ մեր գավթի դրսում է:

Եվ այնտեղ գարշահոտ ջուր կար, որտեղ տան ամբողջ աղբն էին լցնում: Կինը ծիծաղեց պատվիրանը խախտելու վրա:

—Ուզում եմ, — ավելացրեց ամուսինը, — որ ուխտ կապենք. եթե հնազանդվես, քեզ 40 կգ արծաթ կտամ, ապա թե ոչ՝ նույնքան ինձ պարտք կմնաս:

Այս միտքը շատ հաճելի թվաց կնոջը: Իսկ ամուսինը, կնոջից ծածուկ, լրտես կարգեց տիղմի մոտակայքում: Ջարմանալի է. պատվելի

ու համեստ այդ կինն այդ օրվանից երբեք առանց տիղմին նայելու այդտեղով չէր անցնում, քանի անգամ որ բաղնիք էր գնում, տղմոտ տեղի համար իր մեջ պատերազմ էր ունենում: Մի օր էլ, բաղնիքից ելնելով, իր աղախնին ասաց.

\_Եթե տիղմը չմտնեմ, կմեռնեմ:

Եվ իսկույն բարձրացնելով զգեստը, այս ու այն կողմ նայելով, թե իրեն տեսնող չկա, ցանկությունը կատարելու համար մինչև ծնկները մտավ այդ գարշահոտության մեջ: Ամուսնուն անմիջապես տեղեկացրեցին: Եվ նա՝ ուրախացած, կնոջը տեսնելով, ասաց.

\_Ինչպե՞ս ես տիկին, այսօր լավ լոգանք ընդունեցի՞ր:

\_Այո՛, լավ,- պատասխանեց նա:


Ապա ամուսինն ավելացրեց.

\_Գարշահոտ ու տղմոտ ջուրը մտե՞լ ես:

Այս խոսքերից կինն ամոթահար եղավ և իսկույն լռեց՝ տեսնելով, որ հանցանքը հայտնի է եղել: Այնժամ ամուսինն ասաց.

\_Տիկին՛ն, ո՞ր է անխոնարհելի միտքդ, ո՞ր է հնազանդությունդ, ո՞ր է պարծանքդ: Ահավասիկ, Եվայից առավել թեթև պատերազմ ունեցար, չէ՞ որ ավելի թույլին չդիմացար և ավելի մեծ չարիքի մեջ ընկար: Արդ, հատուցի՛ր պարտքդ:

Եվ քանի որ հատուցելու ոչինչ չուներ, նրանից ամբողջությամբ վերցրեց մեծագին զարդեղենը և բաժանեց ուրիշների՝ թույլ տալով կնոջը, որ միառժամանակ ինքն իրեն տանջի:





## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

\*\*\*

Փոքրահասակ մի մանուկ, մորից հաց վերցնելով, դուրս ելավ և ուտելով այս ու այն կողմ էր շրջում, ինչպես այսպիսի փոքր երեխաների սովորությունն է: Այնպես պատահեց, որ մանուկը եկավ այն տեղը, որտեղ Աստվածամոր՝ Կույս Մարիամ պատկերն էր՝ մանուկ Քրիստոս Աստված գիրկը: Նրան նայելով՝ երեխայաբար ու քաղցրությամբ մանկացյալ Քրիստոսին ասաց.

—Ո՛վ սիրելի, աղաչում եմ, վերցրո՛ւ սա, որ հոժարությամբ քեզ եմ ընծայում:

Իսկ պատկերը, թեպետ գեղեցիկ էր նկարված, քանի որ անզգա էր, մնում էր անշարժ, ո՛չ հացն էր վերցնում, ո՛չ էլ պատասխան տալիս: Իսկ մանուկը չէր դադարում աղաչելուց, որպեսզի հաց ուտի իր հետ: Եվ երբ երկար ժամանակ անցավ (իսկ նա ստեպ-ստեպ աղաչում էր), որ հայտնի լինի, թե Աստծուն ինչքան հաճելի են մանուկների խնդրանքները, նույն պատկերն Աստծո զորությամբ երկարեց ձեռքը, մանկանից վերցրեց հացը՝ ասելով.

—Ահավասիկ, ինչպես որ կամենում ես, այդ հացը վերցնում եմ քեզնից, բայց երեք օրից այն կամենում եմ հատուցել քեզ:

Մանուկը, այս պատասխանը լսելով, ուրախությամբ տուն դարձավ և միևնույն ժամանակ էլ հիվանդացավ: Երբ երրորդ օրը եկավ, Տերը՝ Կույս Մարիամ Որդին, կանչեց նրան, որ հոգին ավանդի Աստծուն, որպեսզի հավիտենական կյանքի հացին և երկնքի արքայության բնակությանն արժանանա:





Երանելի Օգոստինոսը<sup>1</sup> գիրք էր գրում Սուրբ Երրորդության վերաբերյալ: Աշխատանքից ու հոգևոր գործունեությունից հետո՝ երեկոյան ժամերին, նա ծովեզերքին շրջելու սովորություն ուներ: Քահանաները նրանից հեռու էին մնում, որպեսզի իրենց զրույցներով նրան իմացական տեսությունից չշեղեին:

Արդ, այսպես շրջելիս մի անգամ տեսավ էր մի գեղեցիկ ու վայելուչ մանկան՝ ծովեզերքին նստած, ով մի փոքր փոս փորելով, ինչպես մանուկների սովորությունն է խաղալով անել, և արծաթի գդալով ծովից ջուրն առնելով, այն փոսի մեջ էր լցնում: Օգոստինոսը, այս տեսնելով և նրան մոտենալով, հարցրեց.

\_\_ Ի՞նչ ես անում:

Եվ նա պատասխանեց.

\_\_ Այս բովանդակ ծովը կամենում եմ այս փոսի մեջ լցնել:

Եպիսկոպոսը ծիծաղելով ասաց.

\_\_ Ո՛վ որդյակ իմ, ինչպե՞ս կարող ես դա անել. ծովը լայնատարած է, իսկ գդալը՝ փոքր, փոսն էլ, որ կամենում ես լցնել, փոքրածավալ:

Ապա մանուկն ասաց.

\_\_ Ինձ համար ավելի դյուրին է այս անել, ինչը որ ես եմ խորհում, քան թե քեզ համար անել այն, ինչը որ դու ես մտածում:

\_\_ Ի՞նչ է դա նշանակում,- հարցրեց եպիսկոպոսը՝ խիստ զարմացած:


Իսկ նա պատասխանեց.

\_\_ Մտածում և կարծում ես փոքր գրով պարփակել այն, թե ի՞նչ է անբաժանելի Երրորդության անճառելի խորհուրդը, որը մինչև կատարես, ես ծովն ամբողջությամբ կլցնեմ այս փոսի մեջ:

---

<sup>1</sup> Օգոստինոսը.....

Այս ասելով՝ անհայտացավ: Օգոստինոսը գոհացավ Քրիստոս Աստծուց և իսկույն հասկացավ, որ մանկան կողմից ասվածը ճշմարիտ էր:



### *ԱՆՂԻՇԱԶԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի մարդ սպանել էր ազատատոհմիկի եղբորը և, քանի որ չկարողացավ փախչել նրանց ձեռքից, ովքեր կամենում էին արյան վրեժխնդիր լինել, մեծ զղջմամբ խոստովանեց իր մեղքը և իրեն հանձնեց Աստծուն: Խելամտորեն վարվելով՝ Ավագ Ուրբաթ օրը հոժար կամքով ընդառաջ ելավ սպանվածի եղբորը: Եվ ընկնելով նրա ոտքերը, իր պարանոցից չվան ու գոտի կախած՝ եղբորն սպանելու համար թողություն էր խնդրում և աղաչում, որ իրեն կյանք շնորհի Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի սիրո համար, Ով այդ օրը մեզ համար չարչարանք էր կրել: Իսկ նա, այսպիսի խոնարհություն տեսնելով, որ նրա մարդասիրությունն էր վեր հանում, գթաց, ինչպես վայել է ազնվական մարդուն, թողություն շնորհեց նրան, Քրիստոսի սիրո համար մահապատժից ազատեց և գրկելով համբուրեց նրան ու ասաց.


— Եղբա՛յր, գնա՛ խաղաղությամբ. Աստված քեզ թողություն է տվել երկնքում, ես էլ քեզ թողություն եմ տալիս երկրի վրա:

Արդ, լսի՛ր, թե հանուն Քրիստոսի սիրո արված այսպիսի վարմունքի համար Աստծուց ինչքա՛ն մեծ վարձք ընդունեց: Նույն գիշեր մեր Տեր Հիսուս Քրիստոս երազի մեջ երևաց նրան և ասաց.

\_Որովհետև երեկ քո թշնամուն հանուն Իմ սիրո ներեցիր, իմացի՛ր, որ սպանված եղբորդ հոգին նույն ժամին երկնքի արքայությանն արժանացրի, նաև նրա հետ քո հորն էլ տարա լուսեղեն հարկերը, քեզ էլ ևս հրավիրում եմ, որ ութերորդ օրը թողնելով այս աշխարհի անձկությունը՝ վայելես հավիտենական փառքը:

Այդպես էլ եղավ, քանզի ութերորդ օրն իսպառ պատրաստված՝ խաղաղությամբ ի Քրիստոս հանգչեց:


Ահավասիկ, տե՛ս, թե ինչքա՛ն լավ է թշնամիներին ներելը. այստեղից հայտնի է, որ չներելու պարագային Աստծուց հեռանում ենք:



Մի կին այնքան բարկասիրտ էր, որ հազիվ թե մեկը կարողանար նրա հետ միաբանվել, սակայն իրեն սուրբ և աղոթասեր էր կարծում, քանզի մարմինը պահքով ճնշում էր, երկար աղոթում և այլ բարեգործություններ էր անում: Բայց մի գլխավոր թերություն ուներ. եթե որևէ մեկի կողմից մի անգամ վիրավորանքի էր ենթարկվում, նրա հանդեպ երբեք սեր չէր ցուցաբերում: Այսպիսի բարկությունն ու վրեժխնդրությունը ոչ ոք չէր կարողանում նրանից հեռացնել:

Մի օր, երբ այս կինը մեծապես հիվանդացավ, խոստովանահայր խնդրեց և իր բոլոր մեղքերը խոստովանեց, բացի այս մեկից, որն ամենևին չհիշեց: Եվ երբ քահանան բացեց մասնատուփը, որ տերունական մարմինը ճաշակել տա, նա փակեց բերանը և երեսը դեպի պատը դարձրեց՝ ասելով.

– Ինչպես որ ես բազում անգամներ երեսս դարձնում էի ինձ վնաս պատճառողներից և երբեք սրտանց չէի ներում ու անբողջապես սիրում նրանց, այլ միշտ բարկության մեջ էի և ուրիշներին էլ իմ բարկությամբ խռովեցնում էի, նույնպես և Աստված իր երեսը դարձրեց ինձնից. ո՛չ ինձ երբևէ մարդասիրապես կնայի, ո՛չ էլ Նրան երբևէ զվարթադեմ կտեսնեմ, այլ բարկացող բոլոր դևերի հետ կդատապարտվեմ և նրանց տանջանքներին մասնակից կլինեմ:



### *ԱՆՈՒՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*


Սուրբ Հովհան Ոսկեբերանը<sup>2</sup> իր քարոզներից մեկում ասում է, թե երբ չարաբարո մարդկանցից ոմանք քարկոծել էին երանելի Կոստանդիանոս ինքնակալի պատկերը, և շատեր նրան հորդորում էին վրեժխնդիր լինել իր պատկերն անարգողներից և ոչնչացնել այսպիսի արհամարհական վերաբերմունք ունեցողներին, ավելացնելով նաև, թե կայսեր ամբողջ դեմքը քարերով չարաչար վիրավորվել էր,- նա ձեռքը դեպի երեսն էր տարել և ծիծաղելով ասել.

– Ո՛չ խոց եմ տեսնում երեսիս, ո՛չ էլ ցավ զգում, գլուխս առողջ է և երեսս՝ ողջ:

Նրանք էլ լսելով անոթահար էին եղել և հրաժարվել իրենց չար խրատներից:

---

<sup>2</sup> Հովհան Ոսկեբերանը.....



Սուրբ Հովհան Ողորմածը եղբորորդի ուներ, ով կռվելով մի պանդոկապետի հետ՝ նրա կողմից մեծագույն անարգանքի ենթարկվեց: Եվ քանզի այս բանը հայտնապես կատարվեց, այն էլ անարգ մարդու կողմից, ինքն էլ մանավանդ պատրիարքի եղբորորդին էր, այս պատճառով, խոցոտված սրտով, կարեվեր, սաստիկ լացով եկավ նրա սենյակ: Հեզահոգի պատրիարքը, նրան այսպիսի զայրույթի մեջ տեսնելով, կանչեց և հարցրեց նրա տրտմության պատճառը: Իսկ նա սաստիկ տրտմության պատճառով չէր կարողանում հայտնել, և մերձավոր մարդիկ ամեն ինչ հայտնի դարձրին պատրիարքին: Իսկ վերջինս, որպես ճշմարիտ բժիշկ, իր եղբորորդու բարկությունն սկսեց մեղմորեն հանգցնել՝ ասելով.


—Արդարև դա այդպես է. արդյոք հնարավո՞ր է, որ որևէ մեկը համարձակվի քո դեմ իր բերանը բացել: Հավատա՛, որոյա՛կ, այնպիսի գործ կանեն այսօր, որ բովանդակ Ալեքսանդրիան<sup>3</sup> զարմանա:

Եվ նրան փոքր-ինչ հանդարտված տեսնելով և կարծելով, թե պանդոկապետը հայտնապես կպատժվի՝ գրկեց նրան և ասաց.

—Որոյա՛կ, եթե իսկապես իմ եղբորորդին ես, պատրաստի՛ր քեզ գանակոծության ու ամեն մարդու անարգանքին, քանզի ճշմարիտ ազգակցությունը ոչ թե արյունից ու մարմնից, այլ հարազատ առաքինությունից է ճանաչվում:

Ապա ուղարկեց ու պանդոկապանին կանչեց և նրան ազատեց բոլոր հարկերից, այնինչ ովքեր այս մասին լսեցին, զարմացան և հասկացան նրա ասածը, թե՛ «Այնպիսի գործ կանեն, որ բովանդակ

Ալեքսանդրիան գարնանա», քանզի ոչ միայն վրեժխնդիր չեղավ, այլև պատժի փոխարեն նրան շնորհներ արեց:



### *ԱՉՔԻ ՆԱՅՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Կուսակրոն մի քահանա մեծ զգուշությամբ իր աչքերը հեռու էր պահում կանանց հայացքներից, մինչև իսկ չէր կամենում նայել իր ազգակիցներին, որոնց հետ հարկ եղած դեպքում խոսում էր, ինչի համար էլ խոստովանահայրը, որ գիտեր նրա մտքի բոլոր գաղտնիքները, նրան հարցում է.

– Ինչի՞ համար ես դու, որ սրբության ու կուսության այսպիսի շնորհ ունես, երեսդ դարձնում պատվավոր ու համեստ կանանց տեսքից:

Աստծո մարդը պատասխանում է.

– Աստվածային լույսով լուսավորվելով, հա՛յր, եթե մարդն անում է այն, ինչ իրենից հարկն է պահանջում և իր կարողությունը զորացնում ու խորշում է մեղանչելու պատճառից, այնժամ և Աստված փոխարենն անում է այն, ինչ իր կողմից է, և մարդուն օգնում ու անվնաս է պահում: Իսկ երբ մարդն իր անձը լրբաբար վտանգի է մատնում, այնժամ էլ Աստված իրավացիորեն անտեսում է նրան և ձեռքից բաց թողնում, և այնպես է լինում, որ մեր ապականացու բնության պատճառով դյուրությամբ մեծամեծ մեղքերի մեջ է ընկնում:





## ԿԱՍԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


\*\*\*

Մի մարդ իր կնոջ հետ արտերի մոտով անցնելիս նրան ասաց.

– Տեսնո՞ւմ ես, ինչպես են արտերը գեղեցկապես ու պատշաճաբար հնձել:

– Յնձած չէ, այլ խուզած,- հակառակվեց կինն ամուսնու խոսքին:

Եվ այսպես ամուսինն ասում էր, թե հնձած է, կինը պնդում էր, թե խուզած է. ամուսինը բարկանալով նրան ջուրը նետեց: Արդ, երբ կինն այլևս չէր կարողանում խոսել, հանեց ձեռքը ջրից, մատներով մկրատի ձևով նշան տվեց՝ ցույց տալով մինչև ի մահ, թե արտը խուզած է:




Դարձյալ, մի ուրիշ մարդ խիստ ինքնահավան ու կամապաշտ կին ուներ: Երբ սա ընկավ գետն ու խեղդվեց, և ամուսինը նրան փնտրում էր ջրին ընդառաջ գնալով, մարդիկ հարցրեցին.

– Ինչո՞ւ ես ջրին ընդառաջ փնտրում:

– Նա պատասխանեց.

– Իմ կինը մշտապես ինձ հակառակվում էր խոսքով ու գործով. արդ, ինչպես որ կենդանության ժամանակ էր անում, կարծում եմ նույնը մահից հետո է անելու, և այնպես եմ հավատում, որ ընդդեմ ջրի է գնացել:





## ԾԻԾԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

\*\*\*

Ժամանակագրության մատյանները պատմում են մի թագավորի մասին, որ երբեք չէր ծիծաղում կամ հազվադեպ էր ծիծաղում: Իշխաններն ու նախարարներն աղաչեցին թագավորի եղբորը, որ իրենց տեղեկացնի արքայի տրտմության պատճառը, թե ինչո՞ւ է երբեք կամ հազվադեպ ծիծաղում, այլ միշտ տխուր-տրտում է օրն անցկացնում: Եղբոր հարցին թագավորը պատասխանում է.

—Մի ուրիշ օր կհայտնենք քեզ:

Այնժամ թագավորը հրամայեց խորունկ փոս փորել և այն մինչև կեսը կայծկլտացող կրակով լցնել: Հետո պատվիրեց փոսի վրա հին ու փտած աթոռ դնել և աթոռի վերևում բարակ թելից երկսայրի սուր կախել, իսկ նրա մոտ հրամայեց սեղան դնել՝ պատրաստված ամեն տեսակ կերակուրներով ու խորտիկներով և անուշահամ գինիով: Իր եղբորը նստեցրեց այդ աթոռի վրա և սուսերամերկ չորս մարդիկ էլ նրա շուրջը կանգնեցրեց, մեկին՝ թիկունքից, երկրորդին՝ առջևից, երրորդին՝ աջից, չորրորդին էլ՝ ձախից, ովքեր իրենց սուսերները նրան մոտեցրեցին: Եվ հրամայեց նրա առջև նվազել բոլոր քնարներն ու նվագարանները: Եվ այդ ամենից հետո թագավորը եղբորն ասաց.

—Ուրա՛խ լեր և գվարճացի՛ր, կե՛ր, խմի՛ր, և թող քո սիրտն ուրախանա:

\_\_Ինչպե՞ս կարող եմ ուրախանալ կամ ծիծաղել,- պատասխանեց եղբայրը,- երբ ամեն կողմից մեծ անձկության մեջ եմ: Թե վար նայեմ, կրակ կտեսնեմ, թե կամենամ սեղանին մոտենալ, փտած աթոռս կջարդվի, և կրակի մեջ կընկնեմ, թե վեր նայեմ, մերկ սուր կտեսնեմ՝ բարակ թելից կախված, թե նայեմ առաջ կամ ետ, աջ կամ ձախ, ամեն կողմից պաշարված եմ մերկ սուսերներով: Եվ այսպես, որովհետև այսպիսի նեղությունների մեջ եմ ընկել, չեմ կարող ո՛չ ուտել, ո՛չ խմել, ո՛չ էլ ուրախանալ:

Այնժամ թագավորն իր եղբորն ասաց.

\_\_Ինչպիսի վիճակում որ դու ես այժմ, նույնպիսին էլ ես եմ ամեն ժամ, քանզի երբ վեր եմ նայում, այնտեղ իմ դատավորին եմ տեսնում, որ ինձ դատելու է, և նրան հաշիվ եմ տալու իմ բոլոր մտքերի, խոսքերի ու գործերի համար: Եթե վար եմ նայում, մտածում եմ դժոխքի կրակի և դատապարտյալների տանջանքների մասին, որոնց հետ և դատապարտվելու եմ հավիտյան, եթե մի մահացու մեղքով իսկ այս աշխարհից ելնեմ: Երբ ետ եմ նայում, տեսնում եմ մեղքերս, որ ընդդեմ Աստծո գործեցի և ժամանակն իզուր անցկացրեցի: Երբ առաջ եմ նայում, մտածում եմ մահվանս մասին, որին ամեն օր մոտենում եմ, և չգիտեմ իմ մահվան ժամն ու տեղը: Երբ ձախ եմ նայում, դևերին եմ տեսնում, որոնք գիշեր-ցերեկ իմ անձն եմ փնտրում և իմ փրկությանը հակառակ եմ: Երբ աջ եմ նայում, տեսնում եմ Աստծո հրեշտակներին, որոնք միշտ բարի խորհուրդներ էին տալիս և ինձ չար ճանապարհից դարձնում էին, որոնք, ավա՛ղ, բավականաչափ չկատարեցի և նրանց բարի խրատներին չհետևեցի: Եվ երբ խորհում եմ, որ այս ամենն ինձ վրա և իմ շուրջն է, ինչպե՞ս կարող եմ ուրախանալ այս աշխարհում, կամ սիրտս ինչո՞վ կարող է զվարճանալ:





## *ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Բարեպաշտությամբ և առաքինի վարքով զարդարված մի եպիսկոպոս աղոթում էր բոլոր սուրբերին, բայց առավելապես Սուրբ Անդրեաս առաքյալին, այնքան որ իր բոլոր գործերը կատարելիս հանապազ այս խոսքն էր հավելում. «Ի փառս Աստծո և Սուրբ Անդրեասի»:

Իսկ մարդկանց հոգիների սկզբնաչար թշնամին՝ ընդդեմ սրբին նախանձով վառված, իր ողջ խորամանկությամբ հնարքներ էր բանեցնում, թե ինչպես նրան կարողանար խաբել: Ապա հույժ գեղեցիկ կնոջ կերպարանք ընդունելով՝ եպիսկոպոսի մոտ եկավ՝ ծանուցելով, թե նրա առջև կամենում էր իր մեղքերը խոստովանել: Եպիսկոպոսը խոստովանության համար նրան ուղարկեց մի խոստովանահոր մոտ, ով հենց այդ գործին էր կարգված:

Սակայն սատանան մերժեց՝ ասելով.

— Մարդկանցից ոչ մեկի առջև չեմ հայտնի սրտիս գաղտնիքները, բացի միայն եպիսկոպոսից:

Եվ վերջինս համաձայնվելով՝ կարգադրեց նրան իր մոտ գալ: Եպիսկոպոսի մոտ գալով՝ նա ասաց.

— Տե՛ր, աղաչում եմ քեզ, ողորմի՛ր ինձ, քանզի ինչպես տեսնում ես, մանկությունից փափուկ կյանքով եմ մեծացել: Թագավորական զարմից ծնված լինելով է, որ հենց այս զգեստներով եմ եկել, քանզի հայրս՝ մեծագոր թագավորը, ազնվական մի իշխանի էր կամենում ինձ կնության

տալ, ում պատասխան տվեցի, թե բնավ չեմ կամենում կնության գնալ, որովհետև իմ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առջև խոստացել եմ կուսությունս հավիտյան պահել: Բայց արդ, դա անչափ վտանգված էր. հարկավոր էր կա՛մ հորս կամքը կատարել, կա՛մ սաստիկ տանջանքներ ընդունել: Ապա գաղտնի փախա. լավ համարեցի պանդխտությամբ ապրել, քան փեսայիս հավատարիմ լինելով՝ ուխտազանց լինել: Արդ, լսելով սրբությանդ համբավը՝ եկա թևերիդ հովանու ներքո քեզ ապավինելու, հուսալով այստեղ առանձնակի տեղ գտնել, որտեղ աղոթքով, մտքի տեսությամբ ու լռությամբ զբաղվելով՝ կարողանամ նաև այս կյանքի վտանգներից փրկվել:

Եպիսկոպոսը, զարմանալով նրա ազգատոհմի մեծության, մարմնի գեղեցկության, հոգու ջերմեռանդության և այսպիսի քաղցր խոսքերի վրա, մեղմաբար և սիրով պատասխանեց՝ ասելով.

—Քաջալերվի՛ր, դո՛ւստր, մի՛ երկնչիր, քանզի Նա, ում սիրո համար և՛ քեզ, և՛ ճոխությունդ, և՛ բարեկամներիդ այդքան արիաբար արհամարհել ես, փոխարենը քեզ այս կյանքում շնորհների առավելությամբ կհատուցի և հանդերձյալուն կատարյալ փառք կպարգևի: Նաև ես՝ Նրա ծառան, խոստանում եմ քո բոլոր կարիքների մասին հոգ տանել: Քեզ համար ընտրի՛ր ուզածդ բնակության վայրը, իսկ այժմ կամենում եմ, որ ինձ հետ ճաշես:

Եվ նա ասաց.

—Ո՛վ հայր սուրբ, մի՛ արա դա, միգուցե այստեղից մեկը կասկածներ ունենա, որից ձեր բարեհամբավ մեծությունը վնասվի:

Եպիսկոպոսը պատասխանեց.

— Մեզ հետ սեղանի շուրջ շատերն են լինում, այդ պատճառով ոչ մի չար կասկած հիրավի այստեղից չի կարող ծնվել:

Արդ, երբ եկան սեղանի մոտ, եպիսկոպոսը կարգադրեց, որ նրան իրեն դեմ հանդիման նստեցնեն, իսկ ուրիշներին այս ու այն կողմ

բազմեցրին: Եպիսկոպոսը շատ էր նրան նայում և նրա գեղեցկությանը նայելու ժամանակ հազիվ էր կարողանում աչքն այլ կողմ թեքել: Եվ այսպես, որքան հայացքով նրա մեջ էր թափանցում, սիրտն այնքան վիրավորվում էր: Եվ երբ նրա երեսին նայելուց չէր դադարում, սատանան նրա հոգին սաստիկ խոցոտում էր, և մոտ էր մեղքին տրվելու, եթե ժամանակին դիպվածը օգնության չհասներ: Բարերար Աստծո խնամքը նրան թույլ չտվեց ընկնել, քանզի պանդուխտ մի մարդ գալով բախեց դուռը և մեծաձայն աղաղակեց, որպեսզի իրեն եպիսկոպոսի մոտ տանեն: Եվ քանի որ չկամեցան, է՛լ առավել ուժգին էր բախում: Եպիսկոպոսը կնոջը հարցրեց.

—Քեզ հարմա՞ր է թվում այդ մարդուն ներս բերել:

Վերջինս պատասխանեց.

—Նախ առակ առաջարկենք նրան, եթե մեկնաբանի, թող ներս գա, իսկ եթե ոչ՝ իբրև եպիսկոպոսի տեսությանն անարժան մեկը, թող ներս չմտնի:

Այս խոսքերը բուլորին էլ հաճելի թվացին, բայց քանի որ ոչ ոք չգիտեր այսպիսի բան առաջարկել, եպիսկոպոսը կնոջն ասաց.

—Դու, որ ամեն ինչում իմաստությամբ և ճարտարորեն գերազանց ես, ինքդ առաջարկի՛ր այդպիսի առակ:

Այնժամ կերպարանված սատանան ասաց.

—Թող նրան հարցնեն՝ ո՞րն է այն մեծագույն հրաշքը, որ Տեր Աստված փոքր բանի վրա արեց:

Երբ պանդուխտ մարդուն այն առաջարկեցին, նա պատասխանեց.

—Մեր երեսների զանազանությունն ու գեղեցկությունն է, քանզի մարդկանց այսքան բազմության մեջ, որ եղել է, կա և լինելու է մինչև աշխարհի վերջը, երկու հոգիներ չեն գտնվի, որոնց երեսներն ամբողջությամբ նման լինեն, նույնպես էլ Ամենազոր Աստված այս փոքր երեսների մեջ բուլոր մարմնավոր զգայություններն է դրել:

Այսպիսի պատասխան լսելով՝ ամենքն էլ զարմացան և ասացին.

– Դույժ գովելի պատասխան է:

Այնժամ կինն ասաց.

– Այլ ազնիվ առակ առաջարկենք նրան, որպեսզի նրա առավել մեծ իմաստությունը ճանաչենք: Թող հարցնեն նրան՝ որտե՞ղ է այն երկիրը, որ երկնքից ավելի վեր է:

Երբ պանդուխտին այս առաջարկեցին, պատասխանեց.

– Բարձրագույն երկնքում, որտեղ նստում է Քրիստոսի մարմինը, քանզի նա բարձրացել է բոլոր երկինքներից վեր, իսկ մարմինը մեր մարմնից է, մեր մարմինն էլ հենց երկրի էությունից է, ուրեմն ուր Քրիստոսի մարմինն է, այնտեղ է այն երկիրը, որ երկնքից վեր է:

Այս պատասխանը լսելով՝ ամենքը հիացան:

Այնժամ կինն ասաց.

– Տակավին կարող ենք երրորդ առակն առաջարկել նրան, առավել դժվարլուծելի, որպեսզի ճշմարիտ լինի վկայությունը նրա իմաստության մասին և արժանի լինի եպիսկոպոսի սեղանին: Արդ, թող ասի՝ ինչքա՞ն է երկրից երկինք հեռավորությունը:


Այս լսելով՝ պանդուխտը հարց-պատասխանը փոխանցողին ասաց.

– Ասա՛ նրան, ով ուղարկել է քեզ, դու քաջ գիտես, դու ի՛նքդ տուր դրա պատասխանը. քանզի ինքն իսկ այդ ճանապարհը չափել է, երբ երկնքից ընկել է դժոխք, որովհետև նա կին չէ, այլ սատանա:

Այս լսելով՝ հարց-պատասխան փոխանցողը զարհուրեց և, ինչ որ լսել էր, ամենքի առաջ պատմեց: Եվ երբ ամենքն էլ զարմացան, հին թշնամին նրանցից աներևույթ եղավ:

Իսկ եպիսկոպոսը հասկանալով իրեն խստորեն կշտամբում էր և աղիողորմ ու դառն արտասուքով իր մեղքն էր ողբում: Նա անմիջապես ուղարկեց, որ պանդուխտ մարդուն ներս բերեն, բայց նրան որևէ տեղ գտնել չկարողացան: Այնժամ եպիսկոպոսը կարգադրեց կանչել ամբողջ

ժողովրդին, պատմեց կատարվածը և պատվիրեց, որ ամենքն էլ պահք պահեն ու աղոթք անեն, թերևս Աստված հայտնի մեկին, թե ո՞վ էր պանդուխտը, որ իրեն այդպիսի մեծ վտանգից ազատեց: Նույն գիշեր եպիսկոպոսին հայտնվեց, թե Սուրբ Անդրեասն էր, որ նրա փրկության համար պանդխտի կերպարանքով երևաց: Այնժամ եպիսկոպոսն առավել սկսեց աղոթել Սուրբ Անդրեաս Առաքյալին և գոհանում էր մարդասեր Աստծուց:



### *ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի հերետիկոս իր աղանդին էր կամենում դարձնել ուղղափառ մի քահանայի, և երբ տեսավ, թե իրենից խորշում է և իր խոսքերը չի ընդունում, նրան ասաց.

— Հավատքիդ մեջ ինքնահավան ու անխոնարհելի ես: Եթե կամենայիր հավատալ իմ խոսքերին, ես քեզ ցույց կտայի Քրիստոսին, Նրա մորը և Աստծո սուրբերին:

Քահանան հասկանալով, որ այդ ցնորքն ու պատրանքը սատանայինն են, կամենալով փորձել, թե ի՞նչ է այն, նրան ասաց.

— Հիրավի քեզ կհավատամ, եթե կատարես խոստացածդ:

Այս լսելով՝ հերետիկոսը հույժ ուրախացավ և նրա համար օր սահմանեց:

Իսկ քահանան, առնելով մասնատուփը տերունական մարմնով, դրեց ծածուկ մի տեղ՝ վեղարի տակ: Հերետիկոսը, քահանային

վերցնելով, տարավ մի մեծ լեռան մեջ գտնվող այր և նրան մեծ ապարանք մտցրեց, որը զարմանալի բոցաճաճանչ լույսերով փայլում էր: Երբ ներս մտան, կարգով շարված բազում ոսկեփայլ աթոռներ տեսան: Մի աթոռի վրա թագավորն էր բազմել՝ մեծ լույսով շրջապատված, նրա աջում՝ թագուհին՝ վայելչագեղ ու շատ գեղեցկատես, այս ու այն կողմերում ծերերն էին բազմել՝ իբր թե նահապետների ու առաքյալների պես, իսկ շուրջը հրեշտակների մեծ բազմությունն էր կանգնած, որոնք ամենքն էլ աստղերի պես փայլում էին՝ կասկածի տեղ չթողնելով, թե դևեր են:

Այս ամենը երբ հերետիկոսը տեսավ, ընկավ գետնին և երկրպագեց՝ իբրև Աստծո:


Սակայն քահանան անշարժ կանգնած էր, բայց տեսիլքի վրա էր զարմացել: Եվ հերետիկոսը, դառնալով քահանային, ասաց.

— Ինչո՞ւ Աստծո Որդուն փառք չես մատուցում, երկրպագի՛ր նրան, որ բազմած ես տեսնում և նրա բերանից մեր հավատքի խորհուրդը կուսանես:

Այնժամ քահանան մոտենալով հանեց մասնատուփը և աթոռի վրա բազմած թագուհուն տվեց՝ ասելով.

— Թե դո՞ւ ես թագուհին, Քրիստոսի մայրը, ահա քո որդին, ում եթե ընդունես, քեզ Աստծո մայր կխոստովանեն:

Եվ երբ այս ասաց, անմիջապես առ աչոք եղած այդ բովանդակ բազմությունը անհայտացավ, իսկ նրանք այնպիսի թանձրամիտ խավարի մեջ մնացին, մինչև որ հազիվ կարողացան այրից դուրս գալ: Ապա հերետիկոսն ուղղափառության դարձավ ու սարսափեց՝ զարմանալով սատանայի հնարագետ խորամանկության վրա:





Մի ազնվական այնքան իրավասեր ու արդարամիտ էր, որ նույնիսկ դատի ժամանակ մարդու երեսին աչք չէր գցում: Սա մի անգամ, երբ հիվանդ պառկած էր մերձակա սենյակում դրված մահճակալի վրա, կնոջ աղաղակ ու ողբ լսեց: Երբ հարցրեց պատճառը, ոչ ոք ստույգ պատմել չհամարձակվեց: Ապա սպասավորներից մեկին ուղարկեց և նրան խստորեն պատվիրեց, որ իրողության ստուգությունն իմանա ու իրեն ասի: Նա էլ տեղեկանալով ահը սրտին հայտնեց.

—Տե՛ր, քո քեռորդին կամենում էր մի կնոջ բռնաբարել, և դա էր աղաղակի պատճառը:

Իշխանը, սաստիկ զայրանալով, զորականներին հրամայեց քեռորդուն կախել:

Իսկ նրանք, կեղծ հնազանդություն ցուցաբերելով, իրար մեջ խորհուրդ արեցին. «Եթե սպանենք այս մեծազգի երիտասարդին, մեր տերն էլ, որ հավանական է, մեռնի, մեզ կա՛մ կսպանեն, կա՛մ կաքսորեն»:

Ապա երիտասարդին ամեն բան տեղեկացրին և խրատեցին, որ քեռու երեսից որևէ տեղ թաքնվի:

Մի ժամ հետո զորականները, տիրոջ մոտ մտնելով, ասացին, որ հրամանը կատարված է:

Չինգերորդ օրը երիտասարդը կարծելով, թե քեռին իր պատիժն անտեսել է, դուռը բացեց ու ներս նայեց: Երբ հիվանդը նրան տեսավ, մեղմաբար իր մոտ կանչեց, մի ձեռքով բռնեց նրա պարանոցից, իսկ մյուսով սուսերը ծածկաբար հանելով՝ կոկորդը կոխեց:

Եվ այսպես, մեծ ողբով ու սրտի հառաչանքով սպանվածին դուրս հանեցին:

Այս արարքը ողջ գավառին չափազանց գարշելի թվաց՝ իշխանի ցավը ցավի վրա ավելացնելով: Երբ հիվանդությունը սաստկացավ, իշխանը եպիսկոպոսի մոտ մարդ ուղարկեց՝ հայցելով Սուրբ Խորհուրդը: Երբ եպիսկոպոսը եկավ, նա իր բոլոր մեղքերը մեծ զղջումով

խոստովանեց, բայց երիտասարդի սպանման համար լռեց, ինչի վրա էլ եպիսկոպոսը բարկանալով ասաց.

— Ինչո՞ւ ես մարդասպանությունը թաքցնում, այն որ սպանել ես քեռորդուդ:

— Մի՞թե դա մեղք է,- հարցրեց նա:

— Շատ մեծ,- պատասխանեց եպիսկոպոսը:

Իշխանն էլ ավելացրեց.

— Ես այն մեղք չեմ համարում և Տիրոջից դրա համար թողություն չեմ խնդրում:

— Ես էլ քեզ հաղորդություն չեմ տա,- վրա բերեց եպիսկոպոսը,- մինչև չխոստովանես այդ մեղքդ:

Այնժամ իշխանն ասաց.

— Իմացի՛ր, հա՛յր սուրբ, որ ես ոխակալության համար չէ, որ սպանել եմ նրան, ոչ էլ սրտիս զայրույթից, այլ միայն Աստծո երկյուղից և արդարության ցանկությունից: Ոչ ոք երբեք այնքան չի սիրում իր քեռորդուն, ինչքան ես էի նրան սիրում: Եթե ինձ տերունական մարմինը չտաս, ես իմ հոգին ու մարմինը Նրան կհանձնեմ:

Այս ասաց ու արեց այն բանի համար, թե միգուցե ընդդեմ արդարության և դատաստանի գործված ինչ-որ թերություն երևա:

Եպիսկոպոսը դեռ սենյակի շենը չէր անցել, երբ հիվանդը նրան ձայն տվեց՝ ասելով.

— Դարձի՛ր, հա՛յր սուրբ, դարձի՛ր ու տե՛ս՝ տերունական մարմինը մասնատուփի մե՞ջ է:


Երբ եպիսկոպոսը մասնատուփը բացեց ու ոչինչ չգտավ, իշխանը նրան ասաց.

— Ինչը որ հրաժարվեցիր ինձ տալ, ահավասիկ Նա ինքն ինձնից չհրաժարվեց:

Եվ Սուրբ Խորհուրդը երևաց նրա բերանում:


Այսպես, նրա հետ տեղի ունեցավ այն, ինչ Աստվածային Գիրքն է ասում. «Սիրե՛ք արդարությունը, ովքեր դատում եք երկիրը: Ծառայե՛ք Տիրոջը բարությամբ և խնդրե՛ք նրան ուղղությամբ, քանզի բնակվում է նրանց մոտ, ովքեր չեն փորձում նրան, և հայտնվում է նրանց, ովքեր ապավինում են նրան»( ):

Իսկ եպիսկոպոսը, սարսափահար, ամենուրեք այս սքանչելիքի մասին էր պատմում:



Մի կին, ում դեմ սատանան զանազան հնարքներով պատերազմում էր, որ իրեն կախի, մի օր` պատարագի ժամանակ, հարմար պահ գտավ, ամբողջ ընտանիքին տնից հանեց, պարանը գերանից կապեց և դուռը փակեց: Եվ երբ պարանը կապելով վզից` կամենում էր իրեն ցած իջեցնել, լսեց զանգակի ձայնը, որ հնչում էր Քրիստոսի Մարմինը բարձրացնելու պահին, և իր սովորության համաձայն ասաց. «Հիսո՛ւս Քրիստոս, կենդանի Աստծո՛ր Որդի, ողորմի՛ր ինձ»:

Եվ ահա անմիջապես գերանն ընկավ, իսկ դները բարձրաձայն տնից դուրս փախան` աղաղակելով. «Քրիստոսի մարմնի զորությունը քեզ հավիտենական կորստից ազատեց»:



*ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի անգամ հրեշտակը մարդու կերպարանքով գնում էր մի ճգնավորի հետ: Երբ եկան-հասան այն տեղին, որտեղ լեշ էր ընկած, և զարշահոտություն էր տարածվում, ճգնավորն իր քիթը փակեց, իսկ հրեշտակը նրան հարցրեց.


\_Ինչո՞ւ ես քիթդ փակում:

\_Այս զարշահոտությունը տանել չեմ կարողանում,- պատասխանեց նա:

Ապա փոքր-ինչ առաջ գնալով՝ հանդիպեցին գեղեցկատես մի հեծյալի, ով զարդարված էր փայլուն զգեստներով: Դեռևս չէին մոտեցել նրան, երբ հրեշտակն իր քիթը փակեց, որից շատ զարմացած՝ ճգնավորը հարցրեց.

\_Ինչո՞ւ ես այդպես քիթդ փակում:

\_Բղջախոհ, հպարտ ու անհամեստ այդ երիտասարդը,- պատասխանեց նա,- առավել զարշելի հոտ է տարածում Աստծո և հրեշտակների առաջ, քան լեշը՝ մարդկանց:



*ՄԵԾԱՅԱՐՈՒՄՏԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի մեծահարուստ մեծ ու ընդարձակ տուն ուներ՝ կից մի շինական աղքատի տան: Մի օր սա անկողնում պառկած՝ վշտանում էր և ննջել չէր կարողանում՝ խորամանկությամբ կարողությունն ավելացնելու և

ագահությանը հագուրդ տալու պատճառով: Եվ լսում էր, թե ինչպես էր աղքատը, թոնրի մոտ նստած, իր որդիների հետ ուրախանում, տեսնում էր, թե ինչպես էր գիշերվա մնացած մասն անուշ քնով անցկացնում, իսկ առավոտյան կնոջ օգնությամբ հազիվ զարթնում, որ վեր կենար և գործի գնար: Մեծահարուստը, նախանձելով աղքատին ուրախ ապրելու համար, որոշեց նրան իր տրտմությանն ու տառապանքներին հաղորդակից դարձնել: Գիշերը վեր կենալով և աղքատի տան դուռը բացելով՝ դռնից դրամով լի քսակ կախեց: Առավոտյան աղքատն այն գտնելով, չկամեցավ սովորական ձևով դրամ վաստակելու գնալ, վախենալով, թե միգուցե մեկը գողանար այդ դրամը կամ իմանար դրամը գտնելու մասին:

Այնուհետև դրամով լի քսակը պահեց խոտի տակ, որտեղ գնջում էր, և պատճառաբանելով, թե հիվանդ էր, պառկեց քսակի վրա, մինչև որ դրամի ինչ անելը որոշեր:

Եվ մինչ բազում օրեր այսպիսի վշտի մեջ էր, չէր ուրախանում և դադարել էր երգելուց, գիշերը նրա տուն եկավ մեծահարուստը և նրանից հարցրեց: Կինը պատասխանեց.


\_Չիվանդացել է:

\_Ես իսկույն նրան կբժշկեմ,- ասաց մեծահարուստը:

Եվ գալով նրա մոտ՝ ծածուկ նրան ասաց.

\_Վերադարձրո՛ւ իմ դրամը, որ վերցրել ես այսինչ տեղից, ապա թե ոչ քեզ կախել կտամ:

Աղքատն էլ վախենալով վերադարձրեց դրամը և նախկին ուրախությունը ձեռք բերեց:




## *ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Նախանձ մարդու մեջ այնքան չարություն կա, որ ոչ միայն ուրիշին է վնաս կամենում, այլև ինքն իրեն:

Մի թագավոր իր մոտ է կանչում մի նախանձի և մի ազահի և ասում, թե ինչ խնդրեն իրենից, նրանց կտա, սակայն այն պայմանով, որ ով վերջինը խնդրի, նրան կրկնակի կտա: Երբ երկուսն էլ հապաղում են խնդրել, թագավորը հրամայում է, որ նախ նախանձը խնդրի: Եվ վերջինս խնդրում է իր մեկ աչքը հանել, որպեսզի մյուսի երկու աչքը հանեն, որովհետև չի կամենում բարի բան խնդրել, որպեսզի ընկերոջը կրկնակի պարգև չտրվի:




## *ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՈՂՈՐՍՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Աստվածատուր անունով մի բարեպաշտ և աղոթարար կոշկակար էր ապրում: Աստված մի ճգնավորի հայտնել էր, որ նրա համար երկնքում տուն էր շինվում, բայց արհեստավորները շաբաթը միայն մեկ անգամ էին աշխատում: Ճգնավորը, տեղեկանալով կոշկակարի վարքի մասին, իմացավ, որ նա հանապազ վաստակում էր և իր տան պետքերը հոգալուց հետո ինչն ավելանում էր, աղքատներին էր բաշխում ամեն շաբաթ օր:

Հետևապես դա էր պատճառը, որ տան շինվածքն ավելանում և կառուցվում էր շաբաթ օրը:




### *ՊԱՏՎԻ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Երբ գավառներից մեկի թագավորը վախճանվեց, և իշխաններն ու նախարարները նոր թագավոր ընտրելու համար չկամեցան միաբանվել, մի շինականի որդու իրենց թագավոր կարգեցին: Վերջինիս հայրը, գալով և իր որդուն թագավորական հանդերձանքով տեսնելով, նրան ասաց.

\_Որդյա՛կ, ինձ ճանաչո՞ւմ ես:

\_Ինչպե՞ս կարող եմ ճանաչել,- պատասխանեց նա,- քանի որ ինձ անգամ չեմ ճանաչում:



### *ՄԱՏԱՆԱՅԻ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Մի շատ աղոթասեր քահանա էր ապրում, ով սիրելի էր շատերին իր առավել բարեպաշտության համար: Այսպիսի շնորհներ նրա մեջ

տեսնելով՝ սատանան նախանձում էր և հանդուրժել չէր կարողանում, սակայն բացահայտ փորձությամբ չէր կամենում նրա դեմ պատերազմել: Կեղծ բարությանը նրան իր կամքին հնազանդեցնելու հույսով լուսավոր հրեշտակի կերպար ընդունեց և երևալով նրան՝ ասաց.

«Աստծո՛ւ սիրելիդ, քեզ մոտ ուղարկվեցի՝ պատմելու, թե ապագայում քեզ հետ ի՛նչ է լինելու: Արդ, քո անձը պատրաստի՛ր, քանի որ այս տարի մեռնելու ես:

Քահանան, կասկած չունենալով, թե սատանան կարող էր լինել, նրա ասածներին հավատալով, մեծ ջանադրությամբ պատրաստվում էր մահվան՝ խոստովանությամբ իրեն խղճմտանքից մաքրելով, պահքով ու արթնությամբ մարմինը ճնշելով, անդադար աղոթելով և ունեցվածքն աղքատներին բաշխելով: Եվ երբ մարդկանցից շատերը նրան հարցրեցին, թե՝ «Ինչո՞ւ ես առանց ընտրության ունեցվածքդ բաշխում», նրանցից մեկին պատճառը ծածուկ կերպով ասաց. «Աստծո հրեշտակը երևաց և ինձ հայտնեց, որ այս տարի մեռնելու եմ»:

Իսկ այդ մարդը, լսելով այս մասին, լուռ մնալ չկարողացավ և հայտնեց ուրիշի: Եվ այսպես, այդ միջավայրում ապրող բոլոր մարդկանց այս բանը հայտնի դարձավ: Տարին ավարտվեց, սակայն քահանան չէր վախճանվել, ուստի սատանան սուտ մարգարե դիտվեց: Բայց Աստծո ընտրյալների համար ամեն ինչ դեպի բարին էր փոխարկվում, քանի որ Աստծո մարդը, որ սատանայի կողմից պատրանքների էր ենթարկվել, բարի գործերի մեջ է՛լ ավելի էր առաջանում:

Սատանայի խորամանկ խաբեության պատճառով քահանան, մարդկանցից անոթահար, աշխարհը թողեց և կրոնավորների վանք մտավ, քանի որ կարիքները հոգալու համար այլևս ոչինչ չուներ:

Քիչ ժամանակ անց սատանան դարձյալ նրա մոտ եկավ և իր որոգայթը լարեց նրա դեմ՝ ասելով.



– Ո՛վ այր դու, մի՛ երկնչիր, որ չմեռար, ինչպես քեզ նախորոք ասել էի, քանզի Տեր Աստված իր նախախնամությամբ շատերի փրկության համար քեզ երկար կյանք է շնորհել: Եվ ահա Տիրոջից առաքվեցի, որպեսզի քեզ հետ լինեմ՝ քեզ պահպանելու և ուսուցանելու:

Քահանան նրա խոսքերին դարձյալ հավատ ընծայեց:

Չետայսու սատանան միշտ նրա մոտ էր և անընդհատ, ինչպես հետո ինքն էլ հասկացավ, իրեն մղում էր այն բանին, ինչը որ ախորժելի էր մարմնի համար, քանի որ երբ կամենում էր երկար աղոթել, կամ հսկում կատարել, կամ աշխատել, հանդիմանվում էր նրա կողմից:

– Ընտրությունը մայրն է առաքիներությունների, թերևս կարող ես շատ ապրել, ինչի համար քեզ պետք է խնայես, որպեսզի երկար ժամանակ Աստծուն ծառայելու կարող լինես:

Եվ երբ կամենում էր մեծ քար քարշ տալ, ասում էր.

– Այդ քարը շատ մեծ է, շարժի՛ր այն, ինչը որ թեթև է:

Եվ այսպիսի խոսքերով խաբում էր նրան: Երբ քահանան կուսակրոն կենսաձևն ընտրեց, սատանան նրան ասաց.

– Խնդրի՛ր վանահորից, որ քեզ առանձին տեղ տալու կարգադրություն անի, որպեսզի կարողանաս համարձակ լսել իմ խոսքերը, ես էլ՝ քոնը:

Եվ վանահայրը կարգավորեց այդ խնդիրը:

Մի գիշեր սատանան, կամենալով գլուխ բերել իր վաղուց ծածկած որոգայթը, նրան զարթնեցրեց՝ ասելով.

– Աստված մեծ գործերիդ համար քեզ կամենում է հատուցել: Առանձին դեպի խուցը գնա՛ և այնտեղ քո գոտիով քեզ փայտից կախի՛ր, և այդպես կընդունես մարտիրոսության պսակը:

Այս լսելով՝ քահանան մեծապես վախեցավ և թքելով սատանայի երեսին, գոչեց.

– Չեռո՛ւ կաց ինձնից, հեռո՛ւ կաց, այժմ ճանաչեցի, թե ո՛վ ես:

Եվ խաչակնքելով՝ իրենից հեռացրեց:

Ապա անմիջապես վանահոր մոտ գնաց և նրան քնից զարթնեցրեց՝ հայցելով, որ իրեն խոստովանեցնի: Վանահայրը հորդորեց նրան համբերել մինչև առավոտ:

Երբ նա համառեց, վանահայրը վեր կենալով նրա հետ խորան գնաց: Քահանան, ընկնելով նրա ոտքերը, խոստովանեց և ասաց.

Սատանան հրեշտակի կերպարանքով վաղուց խաբուծ էր ինձ, մինչև որ ճանաչեցի նրան, թե սատանա է և ոչ հրեշտակ, քանի որ ինձ խրատ էր տալիս, որ կախվեմ:


Նաև իր մյուս մեղքերը խոստովանեց խոստովանահոր առջև: Եվ երբ հայրը նրան ապաշխարության կարգեց և խրատեց հետագայում զգուշանալ, դարձավ իր խուցը: Սատանան, նրա խոստովանության վրա մեծապես զայրացած, աղեղը լարեց և փորձեց նրան նետահարել՝ մեծ սրտմտությամբ ասելով.

Քո վնասով ինձ ամոթահար արեցիր, այժմ կսպանեմ քեզ:

Գնա՛, անիծյա՛լ,- պատասխանեց նա,- քեզնից չեմ երկնջում:

Եվ խաչի նշանն անելով՝ անհայտացրեց:

Եվ այսպես, խոստովանության զորությամբ ազատված՝ այլևս սատանային չտեսավ:




*ԱՍՏՕՈՒ ՄԻՐՈՒ ՄԱՍԻՆ*

\*\*\*

Ուսումնաստեճ մեկն ուրիշ երկրից գալով Փարիզ, մի ուսումնական հաստատություն մտավ, որտեղ աստվածաբանություն էին դասավանդում: Եվ երբ դասախոսի բերանից լսեց կարդացվող այս խոսքը, թե՛ «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով» (Մատթ. ԻԲ(22) 37), անմիջապես վերկենալով՝ դուրս եկավ: Այս տեսնելով՝ բոլորը զարմացան: Դասախոսը նրան հարցրեց.

— Ի՞նչ եղավ քեզ, կամ ի՞նչ ասվեց, որ դուրս ելար:

— Ոչինչ,- պատասխանեց,- սակայն մինչ ուրիշ խոսք լսելը, նախ կամենում եմ գործով կատարել լսածս:



#### ԱՊՇԵՆԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի մեղավոր մարդ, որ իր դատերն ապականել էր, եկավ եպիսկոպոսի մոտ՝ իր հանցանքները խոստովանելու: Նա մեծապես ու զարմանալի զղջումով եւ հորդահոս արտասուքով խոստովանեց և հարցրեց.

- Սոսկ զղջումով ու չարչարանքներով կարո՞ղ եմ արդյոք Տիրոջից թողություն գտնել:

- Անկասկած այդպես է,- պատասխանեց եպիսկոպոսը,- կարող ես եթե կամենաս այդ հանցանքներիդ համար ապաշխարել:

Եվ նա ի խորոց սրտի աղաղակեց՝ ասելով.

- Կամենում եմ, եթե նույնիսկ հրամայես հազար անգամ մահ հանձն առնել:

Իսկ եպիսկոպոսը, գթալով թշվառականին, ասաց.

- Քեզ ընդհամենը յոթ տարվա ապաշխարություն եմ տալիս:

Այն ժամ մեղավորն ասաց.

- Ինձ նման մեծագույն չարագործի համար ընդհամենը յոթ տարվա ապաշխարություն սահմանելն ինչ է. եթե մինչև աշխարհի վերջն էլ կենդանի մնամ, այդքան չարագործությունները քավել չեմ կարողանա:

Եպիսկոպոսը պատասխանեց.

- Գնա՛ և միայն հաց ու ջրով երեք օր պահի՛ր:

Այդ ժամանակ մարդն առավել ողբալով ու կուրծք ծեծելով աղաչեց, որ փրկության ապաշխարությունն առաջնորդի իրեն: Եպիսկոպոսն էլ, խիստ զարմանալով և ուրախանալով, նրան պատվիրեց, որ գնա և միայն «Հայր Մեր»-ն ասի՝ ստուգապես իմանալով, որ իր մեղքերը ներված են: Իսկ մարդն այդ, ուժգին աղաղակոցով գետնին ընկնավ և հոգին ավանդեց: Անկասկած պարզ է, որ այսօրինակ ապաշխարությամբ նա ընդունելի եղավ Աստծուն և փոխադրվեց անանց կյանք:

\*\*\*

Մի մարդ, որ վաշխ ու տոկոս էր վերցնում: Քահանան մշտապես նրան խրատում և ապաշխարության էր հորդորում, իսկ նա էլ ասում էր.

- Լավ, լավ, կգա ժամանակ, կապաշխարեմ:

Նույնը նաև հիվանդության ժամանակ էր ասում: Իսկ քահանան տեսնելով դրա վտանգը՝ ջանադրաբար ստիպում էր նրան, որ ապաշխարի: Եվ երբ արդեն մահամերձ էր, քահանան դարձյալ փորձեց խոստովանության ու ապաշխարության բերելու: Իսկ նա աղաղակեց.

- Օ՛վ ապաշխարություն, ո՞ր ես: Ես այլևս ապաշխարել չեմ կարողանում: Եվ սա Աստծո արդար դատաստանով էր, քանզի այն ժամանակ, երբ կարող էի ապաշխարել, չկամեցա:

Այսպես ասելով էլ մեռավ:

## ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խիստ մեծապատիվ մի եպիսկոպոս կար, որ ոչ միայն եկեղեցական գործերն էր վարում, այլև զբաղվում էր այլոց աշխարական գործերով: Մի օր, երբ

գորականների բազմության հետ սպառազինված անցնում էր արտերով, մի հողագործի տեսավ, որ գութանը հանդում թողած կանգնել, զարմացած և ուշադիր նայում էր հեծելագորին: Տեսածից զարմացած՝ նա ձին ճանապարհից մի փոքր շեղեց եւ դեպի շինականը դառնալով՝ քաղցրությամբ ասաց.

- Մի բան եմ ուզում հարցնել քեզ, բարի՛ մարդ, եթե կկամենաս հարցիս անկեղծ պատասխան տալ:

Հողագործը խոնարհությամբ պատասխանեց.

- Ո՞վ եմ ես, կամ ովքե՞ր են իմ ազգականները, որ քեզ՝ իմ մեծապատիվ տիրոջը, պատասխան չտամ:

Եվ եպիսկոպոսը հարցրեց.

-Ասա՛ խնդրեմ, ի՞նչ էիր խորհում, երբ նայելով ինձ՝ այդպես ծիծաղում և հրճվում էիր:

- Մտածում էի,- պատասխանեց հողագործը,- թե արդյո՞ք սուրբ Մարտինոսը, որ նույնպես եպիսկոպոս էր, նման սպառազինությամբ և զորականների բազմությամբ էր ճանապարհ գնում:

Եպիսկոպոսը, փոքր-ինչ ամաչելով, ասաց.

- Ես ոչ միայն եպիսկոպոս եմ և եկեղեցական, այլև աշխարական կարգով իշխան և կուսակալ, ինչպես որ հիմա տեսնում ես ինձ: Իսկ թե ուզում ես եպիսկոպոս տեսնել՝ այսինչ օրն արի՛ եկեղեցի:

Հողագործն այս պատասխանից մեղմ ժպտաց եւ եպիսկոպոսին ասաց.

- Եթե Ձերդ մեծությանը դժվար չէ, մի բան էլ ես եմ կամենում հարցնել:

**—Ճ<sup>3</sup>ñóñá<sup>°</sup>õ,- á<sup>3</sup>ĩ<sup>3</sup>ëĚ<sup>3</sup>ý»ó »áçëĬáááëÁ,- <sup>1</sup>Áí<sup>3</sup>ñ ãç£**

Հողագործն ասաց.

- Եթե իշխանը, Աստված մի՛ արասցե, իր գործերի պատճառով, դժոխքի մատնվի, ապա մեր եպիսկոպոսն ո՞ւր կգնա:

Այս հարցից ամաչելով՝ եպիսկոպոսն, առանց հողագործին պատասխան տալու, գնաց: Սակայն նրա խոսքերից քիչ բան չշահեց, քանի որ դրանից հետո խիստ զգուշանում էր, որ աշխարհական գործերով ավելին չզբաղվի, քան եպիսկոպոսության հոգեբարձությամբ, և չլինի թե առավելապես իշխանի եւ ոչ թե եպիսկոպոսի վարձը ընդունի:

## ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի կրոնավոր կար՝ զգեստով եւ ոչ թե վարքով, անունով եւ ոչ թե արդյունավորությամբ եւ մեծապես սովոր ամեն տեսակի բամբասանքների: Երբ մահանալու ժամանակը մոտեցավ, նրան հորդորում էին, որ իր հոգու փրկության համար խոստովանի և փութաջանություն դրսևորի: Նա էլ պատասխանեց, թե՝

- Դա չե՛մ անի:

- Ինչո՞ւ,- հարցրին նրան:

Ասաց.

- Չեմ կարող:

Եվ երբ այլեզան խոսքերով նրան հորդորում էին, որ գոնե վերջին շնչում ամբողջ ուժով և կատարյալ հույսով Աստծո ողորմությանը դիմի, Փրկչի մարդասիրությունը խնդրի, նա, հանեց լեզուն, մատով հարվածելով նրան՝ ասաց.

- Ինձ դատապարտեց ամենաչար այս լեզուն:

Այս խոսքերի վրա լեզուն այնքան մեծացավ, որ այլևս բերանում չէր տեղավորվում:

Եվ այս կերպ մեռնելով՝ բոլոր բամբասողներին կորստյան օրինակ ցույց տվեց:

## ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի դատավոր իր տան պատուհանի մոտ երեկոյան նստած՝ նայում էր խոզարածների, որոնք խոզերին տանում և ստիպում էին ներս մտնել: Իսկ երբ չհաջողվեց, նրանցից մեկն ընկերոջն ասաց.

- Եթե կամենում ես, որ խոզերն արագ խոզանոց մտնեն, կանչի՛ր նրանց. «խոզե՛ր, խոզե՛ր, այնպես արագ մտեք ձեր խոզանոցը, ինչպես, օրինակ, դատավորներն են դժոխք մտնում»:

Երբ խոզարածն այս ասաց, խոզերն անմիջապես, առանց հապաղելու սկսեցին մտնել իրենց բնակության վայրը:

Դատավորն այս տեսնելով՝ երկյուղածությամբ ըմբռնեց արդարությունը. դատական իշխանությունը թողեց և իր որդիների հետ իսկույն դեպի վանք շտապեց,

ուր եւ խստակրոն վարքով, աղոթքով և արտասուքով ապրումէր, և այնքան անողորմ էր իր մարմնի հանդէպ, որ մինչև իսկ բազում վանքերի հայր դառնալով՝ ամենուր, որտեղ կրոնավորներ էին ապրում, շրջում էր բոկոտն:

### ՄԵՂՔԵՐԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևելի, գիտությամբ զարդարված մի մարդ կար: Սա տոնական մի օր նոր ու թանկարժեք հագուստներ հագավ, զանազան պատիվներով մեծարվեց, ամբողջ օրն ընկերների հետ խաղ ու խարխճանքների, ըմպելիքի ու այս աշխարհի զանազան ունայն բաների մեջ անցկացրեց:

Երբ երեկո եղավ, զգաստացավ և լռելյայն իր սրտում ասաց. «Ո՞ր է տոնախմբությունը, որ այսօր կատարեցինք, ո՞ր գնացին բոլոր այն խրախճանքները»:

Արդ, տեսնելով, որ աշխարհիկ բոլոր ուրախությունները շուտափույթ անցնում են և տրտմության ու ցավի փոխակերպվում, հաջորդ առավոտ կրոնավորների վանք գնաց, որտեղ երկար տարիներ սրբությամբ, գիտությամբ և իմաստությամբ Աստծուն ծառայեց և, բարի համբավով հռչակվելով ու փայլելով՝ անանց կյանք փոխադրվեց:

\*\*\*

Մի ավազակապետ կար՝ այնքան չարագործ, անողորմ, արյունարբու, որ ճանապարհին ում հանդիպում էր, սպանում էր: Սուրբ ու առաքինի մի վանահայր, այս լսելով, կրկնակի հանդերձներ հագավ և ազնվազարմ ձին նստեց եւ գնաց այն կողմերը, որտեղ ավազակապետն էր գտնվում: Սրան բռնեցին եւ բերեցին ավազակապետի մոտ: Վանահայրն ավազակապետին հարցրեց.

- Ի՞նչ ես ուզում:
- Ձիդ ու զգեստներդ,- պատասխանեց նա:

Այն ժամանակ Հայրը նրան ասաց.

- Իրավունք ունես խնդրելու, քանի որ այս ամենն Աստծունն են և մանավանդ՝ հասարակաց են: Արդ, քանի որ ես երկար ժամանակ վայելեցի՝ արժանի է, որ հիմա էլ դու վայելես: Բայց կամենում եմ իմանալ, թե ի՞նչ ես անելու սրանք:

Պատասխանեց.

- Վաճառելու ենք և ուտելիք գնենք:

Այնժամ Հայրն ասաց.

- Որոյակ, ինչո՞ւ ես այդքան չարչարանքով ու վտանգներով ուտելիք ու հանդերձանք հայթայթում: Ինձ հետ արի՛, և ես անհրաժեշտ քո բոլոր պետքերը քեզ կտամ:

Իսկ երբ սա հրաժարվեց՝ ասելով, թե ոսպ ու բակլա ուտել չի կամենում, Հայրը նրան ասաց.

- Քեզ և՛ միս, և՛ ձկնեղեն, և՛ հաց, և՛ անուշ գինի, և՛ շքեղագարդ անկողին կտամ, միայն թե իմ հետևից եկ:

Եվ երբ համաձայնվեց և վանք եկավ, հայրը նրան հանձնեց եղբայրներից մեկին, ով ամեն օր նրան նախապես ասված բոլոր անհրաժեշտ բաները բերում էր: Արդ, երբ ավազակապետը հագնում էր, կրոնավորի կարգադրությամբ նստում էր գետնին՝ նրա դիմաց և տեսնում, որ նա միայն հաց էր ուտում և ջուր խմում:

Ավազակապետը նրան հարցնում է.

- Ինչի՞ համար ես այդքան ծանր ապաշխարություն կատարում: Մի՞թե մեկին սպանել ես, կամ պոռնկություն արել:

Կրոնավորը, զարմանալով ու սոսկալով, պատասխանում է.

- Հեռո՛ւ ինձնից, Աստված մի՛ արասցե, եթե ես մարդ սպանած կամ թե մարմինս պոռնկության մեղքով ապականած լինեմ, քանի որ մանկությունից ի վեր այս վանքում եմ մեծացել: Նրա համար եմ ապաշխարում, որ մեռնելիս Աստծո առաջ ողորմություն գտնեմ:

Այդ ժամանակ ավազակը զղջալով՝ ասում է.

-Ես՝ եղկելիս ու թշվառականս, որ այնքան գողություն, մարդասպանություն, շնություն եւ այնքան անթիվ-անհաշիվ չարիքներ եմ գործել ու երբեք պահք չեմ պահել, ինչպե՞ս ողորմած Աստծուն ինձ հետ կունենամ:

Եվ ընկնելով վանահոր ոտքերը՝ արտասուք թափելով այնքան ապաշխարեց, որ ժուժկալությամբ ամենքին գերազանցեց:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Երկու օտարական մուրացկան, պատառոտված զգեստներով, առանց շապիկի, համարյա մերկ, Հայր Իսահակի մոտ եկան եւ նրանից ողորմություն խնդրեցին: Եվ մինչ սրանք հանդերձներ էին խնդրում, Աստծո մարդն էլ լուռ լսում էր: Ապա իր մոտ կանչելով աշակերտներից մեկին՝ ասաց նրան.

- Գնա՛ անտառ և այնտեղ՝ այսինչ տեղում, երկճղանի ծառ կգտնես, և այնտեղ գտնվող հագուստներն առնելով՝ կբերես այստեղ:

Եվ երբ աշակերտը գնաց գտավ ամեն բան՝ ծածուկ բերեց հոր մոտ: Նա էլ, վերցնելով դրանք, մերկ ու մուրացիկ աղքատներին ասաց.

-Առե՛ք և հագե՛ք, քանի որ մերկ եք:

Սրանք, երբ տեսան զգեստները, ճանաչեցին. իրենք էին թաքցրել դրանք, և սաստիկ վախեցան:

Եվ այսպես՝ նրանք, որ դավաճանությամբ ուրիշների հանդերձանքն էին խնդրում, ամոթով իրենցը վերցրին:

Երկու մեծահարուստ, իրար նկատմամբ խիստ թշնամությամբ լցված, չարունակ սպասում էին պատեհ առիթի , որ բռնեն կամ սպանեն մեկը մյուսի: Նրանցից մեկը չարագործ մի ծառա ուներ, որ այդ ժամանակ ուրիշի մեկին էր ծառայում: Այս ծառան, գալով սրա մոտ, սկսեց ամբաստանել ներկա տիրոջը և խոստացավ, որ դուրին կերպով նրան կհանձնի վերջինիս ձեռքը: Եվ սա էլ, մեծապես ուրախանալով, խոստացավ նրան ծառայության դիմաց արծաթ տալ: Ահա չարագործը, հարմար պահ գտնելով, իր տիրոջը գցեց թշնամու ձեռքը: Երբ վերջինս նրան սպանեց, այս դավաճանն անմիջապես գնաց սպանվածի բարեկամների մոտ և նույն դավաճանությամբ սպանողին մատնեց: Այս բանը շուտով ի հայտ եկավ, և նրանցից մեկը, ում մոտ կամենում էր մատնել սպանողին, բռնեց եւ դատավորի հրամանով կախեց ծառից: Ազգականների խնդրանքով նրա մարմինը գիշերով թաղեցին, բայց զարմանալի մի բան տեղի ունեցավ. առավոտյան մի խումբ անծանոթ շներ, բազում մարդկանց վկայությամբ, նրա մարմինը գերեզմանից հանեցին ու պատառ- պատառ արեցին:

## ՋՂԶԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մի կին, պոռնկության հրով վառված, տռփանքով լցվեց հարազատ որդու նկատմամբ եւ նրանից մի արու զավակ ծնեց: Ապա նման զազիր գործերից զարհուրած՝ ամեն ժամ երկնչում էր, թե հնարավոր է դիվահարվի կամ հանկարծակի չարամահ լինի:

Դրանից հետո Աստծո ողորմությամբ սկսեց խորհել, ապաշխարել և առաջնորդի խրատով իր որդու հետ գնաց Հռոմ և մեծ վստահությամբ հայրապետի առաջ կանգնեց: Սաստիկ արտասուքներով ու հառաչանքով, բոլորին մեկ առ մեկ խոստովանեց իր մեղքերը, մինչեւ իսկ բոլորին զարմանք պատճառելու չափ՝ որդուն էլ, որպես իր գործած անօրենության վկա, իր մոտ ունենալով:

Իսկ հայրապետը, տեսնելով կնոջ այսչափ զղջումն ու ճշմարիտ ապաշխարությունը, գթաց, ճարտար բժշկի պես կամեցավ ախտավորին կատարելապես ու շուտափույթ առողջացնել, նաև զղջման մեջ նրան փորձելու նպատակով հրամայեց, որ կինը իրեն ներկայանա այն զգեստով, որով որդուն էր այցելել մեղանչելիս: Եվ նա, հավիտենական ամոթը ժամանակավորից առավել համարելով, անմիջապես զգեստները հանեց և հայրապետի առաջ կանգնեց միայն շապկով: Եվ ինչպես պատրաստ էր (մեղքերի) դիմաց հատուցելու, նույնպես էլ բավարարեց իր հնազանդությամբ:

Հայրապետը մտածեց, որ մեղի ոչ մի պատիժ չի կարող ընդհիմանալ բոլորի մոտ այսքան ամոթ (կրելու) այսչափ հնազանդությանն ու այսչափ ապաշխարությանը, կնոջն ասաց.

- Քո մեղքերը ներված են, գնա՛ խաղաղությամբ:

Եվ որպես ապաշխարություն՝ նրան ոչինչ այլեւս չկարգադրեց:

Երբ եպիսկոպոսներից մեկն այս լսեց, փարիսեցու նման հայրապետի դեմ քրթմնջալով, նրան հանդիմանեց՝ ասելով.

- Այդքան մեղքերի դիմաց այսչափ քիչ ապաշխարություն կատարյալ չէ:

Հայրապետը պատասխան տվեց.

- Եթե ես անհրավ կերպով արեցի դա, և Աստծո առաջ նրա ապաշխարությունը բավական չէ, թո՛ղ սատանան իմ մեջ մտնելու զորություն առնի և ամենքի առաջ ինձ չարչարի, իսկ եթե դու ես հանիրավի ինձ հանդիմանում, թո՛ղ քեզ հետ կատարվի:

Երբ հայրպետն այս ասաց, դևն իսկույն սկսեց եպիսկոպոսին տանջել, որով հայտնապես Աստված ցույց տվեց, թե կնոջ ապաշխարությունը կատարյալ էր: Ապա դրանից հետո, ամենքի աղոթքով ազատվելով դևից՝ եպիսկոպոսը սովորեց ապագայում իր չարչարանքների գնով չնվազեցնել Աստծո մարդասիրությունը:

## ԵՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Երկու քաղաքացիներ իրենց մեղքերը քահանային խոստովանելիս, մեղքերի ևս երկու տեսակ խոստովանեցին, որոնք թեպետև ըստ իրենց շատ ծանր մեղքեր են, սակայն սովորաբար վաճառականների մոտ թեթև են համարվում կամ չնչին. այն է՝ սուտ խոսելն ու սուտ երդվելը: Եվ ասացին.

- Հայր, ոչ մի բան չենք կարող գնել կամ վաճառել, եթե սուտ չասենք կամ սուտ չերդվենք:

Խոստովանահայրը նրանց ասաց.

- Այդպիսի մեղքերը ծանրագույն են և Փրկչի կողմից արգելված. այնտեղ, որտեղ ասում է. «Ձեր խոսքը լինի՝ այոն՝ այո, և ոչը՝ ոչ» (Մատթ. Ե 37):

Եվ նրանք պատասխանեցին.

- Այդ պատվիրանը չենք կարող առևտրում պահել:

Քահանան նրանց ասաց.

- Անսացե՛ք իմ խրատին և լավ հաջողություն կունենաք:

Սուտ մի՛ ասեք և սուտ մի՛ երդվեք, այլ երբ կամենում եք մի բան վաճառել, այնչափ գովեք:

Եվ նրանք խոստացան մեկ տարի այդպես փորձել, ինչպես որ քահանան էր պահանջում:

Այդ տարի, սատանայի հնարքով, որ միշտ բարուն հակառակ է, ոչինչ վաճառել չկարողացան: Մի տարի անց խոստովանահոր մոտ դարձան՝ ասելով.

- Մեր հնազանդությունն այս տարի մեզ մեծ վնաս հասցրեց, քանի որ մարդիկ մեզնից երես դարձրին, և առանց երդման ոչինչ չկարողացանք վաճառել:

Այդժամ քահանան ասաց.

- Մի՛ երկնչեք, քանզի դա փորձություն է, հաստատուն եղեք ձեր սրտերում, որ ոչ մի ներհակություն, ոչ մի աղքատություն ձեզ այդ ուխտադրությունից հետ չդարձնի, և Տեր Աստված էլ ձեր ունեցվածքը կօրհնի:

Նրանք էլ խոստացան, թե՛

- Աստծո կարողությամբ խրատդ ու Աստծո պատվիրանը մեր կյանքի բոլոր օրերում կպահենք, եթե անգամ մուրալու հարկ լինի:

Ջարմանք. Աստված անմիջապես վերացրեց այդ փորձությունը, և մարդիկ սկսեցին նրանց դիմել առավել, քան մյուս վաճառականներին: Եվ ոչ շատ օրեր հետո այն աստիճան հարստացան, որ մինչև իսկ իրենք էին զարմանում:

Եվ դառնալով իրենց խոստովանահոր մոտ՝ նրան գոհություն հայտնեցին, որ նրա փրկարար խրատով նման մեծամեծ հանցանքներից ազատվեցին և երկրային ունեցվածքով բարգավաճեցին:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռներում մոլորված երկու կուսակրոն քահանա փորձում էին ճանապարհ գտնել: Եվ ահա տեսնում են մի կարճահասակ մարդու, որին երբ կանչում են, փախչում է և ոչինչ պատասխանում:

Բայց երբ ստիպում են և հարցնում, թե՛

- Ո՞վ ես, ասա՛

- Երեսուն տարի է ծառայում եմ դևերին: Ինձ նրանց մատնեցի և նրանց դրոշմն եմ կրում ձեռքիս: Ջանազան կերպարանքներով ինձ երևում և ինչ հրամայում են, անմիջապես կատարում եմ:

Նրանցից (քահանաներից) մեկը սկսեց նրան ցույց տալ դժոխքի տանջանքների մեծությունը, մեղքերի ունայնությունն ու Աստծո անսպառ ողորմությունը: Դրանից հետո նա զղջաց, խնդրեց խորհուրդ՝ իր անձը փրկելու համար:

Այդ ժամանակ քահանան ասաց.

- Խոստովանիր՝ քո բոլոր մեղքերը, քանզի այնքան է խոստովանության զորությունը, որ մինչև իսկ սատանանի ուզածո զորություն կարող է բեկանել և Աստծո ուզածո բարկություն՝ մարել և ուզածո հոգևոր զարդով քեզ զարդարել:

Այդ ժամանակ մարդը կատարյալ զղջմամբ խոստովանում է և իսկույն սատանայի դրոշմն ընկնում է նրա ձեռքից:

Այդ ժամանակ քահանաներն ասում են նրան.

- Որպեսզի ավելի ստույգ իմանաս սուրբ խոստովանության գորությունը, համարձակորեն մնա այստեղ և երբ դևը, որին մատնել էիր քեզ, գա քեզ մոտ և չճանաչի քեզ, իմացիր, որ Տեր Աստված թողություն է տվել) քո հանցանքներին:

Նա էլ Աստծո ողորմության հույսով՝ աներկյուղ սպասեց դևին:

Երբ քահանաները գնացին, հեծյալների մեծ բազմությամբ եկավ սատանան /և/ հարցրեց նրան, թե /արդյոք/ տեսել<sup>ո</sup> է իր ծառային:

Նրան մարդը պատասխանեց.

- Ես եմ նա, ով ծառայեց քեզ երեսուն տարի:

Եվ դևն ասաց

- Սուտ ես խոսում, խաբեբա՛, ես քեզ / երբևէ/ չեմ տեսել: Ես նրան եմ փնտրում, ով իմ կնիքն ունի իր ձեռքին:

Եվ նա այս լսելով՝ քահանաների հետ գնաց և մինչ ի մահ ծառայեց Աստծուն:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ջղջումով՝ առանց խոստովանության, մեղքերի թողության չեն հասնի: Եվ սա է ցուցանում այս օրինակը: Մի կին, իր մեղքերը խոստովանելիս, մեկը թաքցնում է. խիստ մեծ անոթից համարձակվում հայտնի դարձնել: Որի համար էլ խղճից մտովի հույժ չարչարվելով՝ եկեղեցի է գնում և ընկնելով Սբ. Խեղանի առաջ՝ ողջ մարմինը արտասուքով ողողելով և մեծ պաղատանքով աղաչում էր Աստծուն, որպեսզի այն մեղքը, որ չէր համարձակվում որևէ մեկին հայտնել, առանց խոստովանության թողնվի իրեն: Երբ երկար ժամանակ այսպես աղոթում էր, այն քահանան, որ այդ ժամանակ եկեղեցում էր, տեսնում է սատանային, որ այս կնոջ վրայով այս ու այն կողմ է թռչում և խնդազին ծիծաղում, ծափ էր տալիս և վաշ- վաշ անում: Դրա համար էլ քահանան երդվեցնում է սատանային մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ ասելով.

- Ով՛ պիղծ, ինո՞ւ ես այդքան ուրախ: Ասա՛ ինձ պատճառը, ինչ՞ պատահեց քեզ: Սատանան պատասխանում է.
- Ինչպես՞ չծիծաղեմ տեսնելով այս կնոջը, որ կոծալով ու ողբալով դժոխք է շտապում: Անմիտը կարծում է, թե լալով ու արտասվելով իր չխոստովանած մեղքը կարող է ջնջել. անկարելիին է ձգտում: Ծաղրի եւ ոչ թե թողության է արժանի: Այս լսելով քահանան գնում է կնոջ մոտ և ինչ որ տեսնել ու լսել էր ասում է նրան, և երկչոտին ինչպես կարող էր հորդորում է խոստովանելու: Իսկ կինը, մի կողմ թողնելով իր ամոթը, այն մեղքը, որ այդքան ժամանակ թաքցրել էր, մեծ խոնարհությամբ ու արտասուքներով խոստովանում է: Այս տեսնելով՝ սատանան մեծ աղաղակով ու գարշահոտությամբ լցնելով եկեղեցին անհայտացավ եւ այլևս չերևաց:

## ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Այնպես պատահեց, որ մի անգամ ինչ-ինչ մարդիկ գինի էին ըմպում պանդոկում և արբած խոսում էին միմյանց հետ զանազան բաներից: Հետո զրույց բացվեց, թե ինչ է լինում այստեղից (աշխարհից) հեռանալուց հետո: Այդ ժամանակ նրանցից մեկն ասաց.

- Քահանաները զուր են խաղում մեզ հետ, որ ասում են, թե հոգիները այս կյանքից հետո կենդանի են: Այս լսելով՝ ամենքը ծիծաղում են: Եվ ահա մի մարդ՝ ուժեղ ու մեծահասակ, գալիս նստում է նրաց մոտ և հրամայում գինի բերեն, սկսում է ըմպել և հարցնում, թե ինչ են միմյանց հետ խոսում: Առաջինը պատասխանում է, թե.

- Մարդկանց հոգիների մասին ենք զրուցում, որ եթե մեկը կամենա իմ հոգին գնել, էժան կվաճառեի նրան և ինչ որ առնեի՝ հոժարությամբ ամենքի փոխարեն գինու գինը կվճարեի:

Եվ երբ ամենքը նրա անմտության վրա ծաղրում էին, հյուրն ասաց.

- Ես նման վաճառող եմ փնտրում և հոժար եմ գնել: Ասա՛, որքան ես վաճառում այն:

Իսկ նա իր բերան բացեց, ասաց.

- Այսքան

Եվ նույն ժամանակ գինը որոշեցին, և հոգիների գնողը դրամը տվեց: Եվ երբ ամենքն /արդեն/ ուրախությամբ ընկան էին լի բաժակները, նա, որ իր հոգին վաճառել էր, ոչինչ չէր մտածում: Իսկ երբ երեկո եկավ, վաճառականն ասաց.

- Ժամանակն է, որպեսզի ամեն մեկն իր տուն գնա, բայց մինչ կգնանք, նախ դատաստան արեք: Եթե մեկը ձի գնի և այն բերանին սանձ ունենա, միթե՞ չի բռնի սանձն այն՝ ձիու հետ գնված: Ամենքը միաբերան պատասխանեցին, թե.

- Այդ այդպես է:

Եվ ահա հոգեծախ թշվառականն սկսեց ահից դողալ: Իսկ վաճառականը, բոլորի աչքերի առաջ վերցրեց նրան, բարձրացրեց վեր՝ հոգով եւ մարմնով հանդերձ, և տարավ իր հետ դժոխք, քանզի նա սատանա էր՝ մարդու կերպարանքով, քանի որ էլ ով՞ կարող է մարդու հոգի գնել, եթե ոչ նա, ով միշտ և ամեն օր ջանում է կորստյան մատնել մարդու հոգին:

## ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի անապատական բնակվում էր միաբնակների վանքին մոտ: Երբ հիվանդացավ, լուր տվեց վանահորն՝ աղաչելով, որպեսզի գա իր մոտ և աստվածային Խորհուրդների հաղորդություն տա:

Իսկ հայրը, իր հետ վերցնելով մի լռակյաց եղբոր (վանական) գնաց, որպեսզի հաղորդություն տա նրան: Եվ մինչ գնում էին, մի ավազակ, զանգակի ձայներ լսելով, գնաց նրանց հետևից մինչ անապատավորի սենյակը և կանգնեց դռան առջև՝ իրեն անարժան համարելով՝ մտնելու նման սուրբ մարդու խուցը: Եվ երբ անապատավորը խոստովանեց ու հաղորվեց, ավազակը, դռնից ոչ հետու կանգնած, իր սրտի խոնարհությամբ հանդերձ ասաց.

- Երանի՛ թե ես էլ քեզ պես լինեի:

Իսկ անապատավորը սրտի հպարտությամբ և ինքնահավանությամբ ասաց.

- Իրոք՞ ուզում էիր, որ ինձ պես լինեիր:

Այդ ժամանակ այն լռակյաց, հոգեզարդ եղբայրը, որ իր սրտում ծածուկ Աստծո գաղտնիքը գիտեր, սկսեց դառնապես լալ: Եվ երբ վանահայրն այդ եղբոր հետ վեր կացավ գնաց, այն ավազակը հեռվից գնում նրանց հետևից՝ աղոթելով Աստծուն, որ տա իրեն ճշմարտության զղջումն ու ուղիղ գործեր, քանի որ հաստատել էր իր մտքում՝ հոր առաջ խոստովանել և ավելին չմեղանչել, այլ ապաշխարել իր մեղքերի համար:

Եվ մինչ վազում էր, ընկավ և իսկույն մեռավ: Այս տեսնելով եղբայրն այն հույժ ուրախանալով՝ սկսեց ծիծաղել:

Երբ վանք եկան, հայրը հարցրեց եղբորը, թե.

- Ինչու՞ էիր այդպես լուռ քայլում:

Եվ պատասխան տվեց.

- Մի օր հրամայեցիր ինձ լռել և ես այն օրից ի վեր լուռ եմ, բացառությամբ, երբ ինձ որևէ բան են հարցնում խոսում եմ:

- Ապա ինչու՞ էիր լաց լինում, երբ այն սուրբ անապատավորին հարողորդություն էի տալիս և ինչու՞ ծիծաղեցիր, երբ այն չարագործ ավազակը մեր ետևից վազում էր՝ կամենալով մեզ կողոպտել կամ սպանել, և իր այդ մեղքի համար էլ մեռավ:

Պատասխան տվեց եղբայրը.

- Հայր՛, իմ լալու պատճառն այս էր. քանի որ երբ ճգնավորին հաղորդություն տվիր, այդ ժամանակ ավազակը դռան ետևում կանգնած իր սրտում ասաց. « Երանի քո փոխարեն ես լինեի»: Իսկ ճգնավորը սրտի հպարտությամբ պատասխանեց. «Այդ հոժարակամ ես խնդրում»: և

Ապա մեռավ և դատապարտվեց, դրա համար էլ լաց եղա: Բայց ավազակը, որ մեր ետևից էր գալիս, հաստատուն բան ուներ մտքում՝ խոստովանել և ոչ թե կողոպտել մեզ կամ սպանել: Եվ երբ վազում էր, ընկավ և մեռավ: Հրեշտակներն ուրախությամբ նրա հոգին վերցրեցին, երկինք տարան, քանի որ նրա զղջումն այնքան էր, որ եւ՛ ժամանակավոր և՛ հավիտենական պատիժը ջնջվեց:



## ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեք հանրահայտ ավագակներ կային, որոնք բազում վայրերում բազմաթիվ չարիքներ էին գործել: Սրանք մի անգամ գալիս են մի վանք և ինչ-որ կերակուր խնդրում: Իսկ վանքի վերակացուն էլ սաստիկ խոսքերով կշտամբում է նրանց՝ ասելով.

- Դուք արյունարբու գողեր ու ավագակներ, ոչ միայն չեք ամաչում այլոց վաստակն հափշտակելուց, այլև համարձակվում եք անամոթաբար Աստծո ծառաներին տրված ողորմությունն ուտել: Արժանի չեք, որ հողը ձեզ տանի, քանի որ ոչ Աստծուց եք երկնչում, ոչ էլ՝ մարդկանցից ամաչում: Հեռու գնացեք ձեր չար գործերով հանդերձ և այլևս մի հանդգնեք վերադառնալ այստեղ:

Իսկ նրանք զայրացած, մեծավ սրտմությամբ ետ դարձան:

Եվ ահա նույն օրը վանահայրն ինչ-որ տեղից վերադառնում է՝ հետն ունենալով մի քանի նկանակ եւ մի շիշ գինի, և վերակացուից լսելով, թե ինչպիսի պատասխան էր տվել ավագակներին, հանդիմանում է նրան ասելով՝ թե.

- Անիրավորներն ես դա արել, քանզի մեղավորները մարդասիրությամբ և քաղցրությամբ ավելի ոյությունամբ են դարձի գալիս, քան սպառնալիքներով ու խստությամբ, որովհուոև Քրիստոս Աստված վարդապետը մեր, Ում Ավետարանը խոստացաք պահել, ասել է.

- Բժիշկն առողջների համար չէ , այլ՝ հիվանդների: Չեկա կանչելու արդարներին, այլ մեղավորներին: Այդ պատճառով էլ շատ անգամ մեղավորների հետ էր ուտում: Արդ, քանի որ այդ արել ես ընդդեմ սիրո և Քրիստոսի պատվիրանի, սուրբ հնազանդության համար հրամայում եմ քեզ, որ հենց հիմա առնես այս նկանակն ու շշով գինին, շուտափույթ փնտրես ավագակներին և գտնելով նրանց՝ ընծայես իմ անունից: Եվ ապա՝ ծնկելով նրանց առաջ, խոնարհությամբ խոստովանես քո հանցանքը, որ նման տրտմությամբ ու խստությամբ վարվեցիր նրանց հետ: Եվ կաղաչես նրանց, որպեսզի այլևս այդպիսի չար գործեր չանեն, այլ երկյուղեն Տեր Աստծուց և ընկերներին էլ չվնասեն: Եվ եթե այս անեն, խոստանում եմ

բոլոր նրանց մարմնական պետքերը հոգալ: Այս կասես նրանց աւ այնտեղից կվերադառնաս:

Եվ երբ սա գնաց փնտրելու ավազակներին, վանահայրը եկավ աղոթքի կանգնեց առ Աստված, որպեսզի նրանց զղջում և ապաշխարության դարձ տա:

Արդ, երբ ավազակներն ուտում էին այն ողորմությունը, որն ուղարկել էր նրանց Աստծո մարդը, սկսեցին միմյանց հետ խոսել՝ ասելով. «Վայ՛ մեզ՝ եղկելիներիս և թշվառներիս, թե դժոխքի որքան մեծ ու անտանելի տանջանքներ են մեզ սպասում, որ ոչ միայն կողոպտում ենք մարդկանց ստացվածքներից, այլև զրկում ենք կյանքից, և սակայն, այսքան մեծամեծ չարիքներից և մարդասպանություններից հետո ամենևին ոչ Աստծուց երկյուղ ունենք և ոչ էլ խղճմտանք:

Իսկ ահա այդ սուրբ եղբայրը, որ եկել է մեզ մոտ, այնքան փոքր մի բանի համար, որ մեզ արդարորեն, մեր իսկ չարությանից դրդված՝ մեզ հանդիմանել էր, իրեն այսքան խոնարհեցրեց և դատապարտեց՝ մեր առաջեւ, և մանավանդ՝ նման առաքինի և սուրբ այրը մեզ առատ խոստումներ պարզեց, հաց ու գինով մեր պետքերը լցրեց: Արդարև, դրանք են սրբերն Աստծո. որոնք երկինքը պիտի ժառանգեն: Իսկ մենք՝ կորստյան որդիներս, օրըստօրե ավելացնում ենք հավիտենական դժոխքի մեր տանջանքերը, չգիտենք, թե կարող ենք ողորմություն գտնել Աստծուց՝ այսքան չար ու զազիր մեր գործերի համար:

Նրացից մեկը, երբ նման բաներ էր խոսում, մյուս երկուսն ասում են. «Այդ դեպքում ինչ՞ անենք»: Եվ նա ասում է. «Գնանք՝ Աստծո մարդու մոտ և եթե նա մեզ հույս տա, որ մենք՝ նման չարագործներս, կարող ենք ողորմություն գտնել Աստծուց: Մեզ մի անգամ պատվիրածը կանենք, միայն թե կարողանանք մեր հոգիներն ազատել դժոխքի գեհենից:

Հավանություն տալով սրան՝ երեքն էլ մեկ առ մեկ գնում են Աստծո մարդու մոտ, ասում.

— Հայր՛, մենք մեր մեծամեծ չարագործությունների պատճառով տարակուսանքի մեջ ենք՝ արդյոք՞ կարող ենք Աստծուց ողորմություն գտնել: Բայց եթե դու մեզ հուսադրես, թե Աստված երես չի դարձնի մեզնից, ահավասիկ, պատրաստ ենք քեզ հետ ապաշխարել, և այն ամենին, ինչ որ մի անգամ պատվիրես մեզ, կամենում ենք հնազանդ լինել: Իսկ Աստծո մարդը նրանց սիրով ու

քաղցրությամբ ընդունեց և զանազան ապացույցներ մեջբերելով՝ հավաստիացրեց նրանց Աստծուց մարդասիրություն գտնելու մասին: Ինչպես նաև խոստացավ նրանց՝ Տեր Աստծո շնորհն ու ողորմությունը գտնելու մասին՝ ուսուցանելով նրանց, թե որքան մեծ է Աստծո մարդասիրությունը մեր անթիվ մեղքերի դեմ. թեև անսահման են՝ հաղթահարում են և թաքցվում և մանավանդ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեղավորների համար աշխարհ եկավ, որպեսզի փրկի նրանց:

Արդ, ավագակները հրաժարվելով աշխարհից ու իրենց չար գործերից՝ ընդունելի եղան Տեր Աստծուն եւ Նրանով զգեստավորվեցին ու սրտով կենդանացան: Նրանցից երկուսը կարճ ժամանակի ընթացքում գովելի վարք ձեռք բերեցին, հրավիրվելով Տիրոջից՝ այս աշխարհից տեղափոխվեցին: Իսկ երրորդը երկար ապրեց, եւ մշտապես, մտովի անցկացնելով իր ծանր ու զանազան մեղքերը, անչափ ապաշխարեց: Ընդհուպ հիսուն տարի՝ որքան, որ ապրում էր, հացով ու ջրով էր միայն անցկացնում, միշտ բոկոտն էր շրջում և գիշերն աղոթքի կանգնում և մինչև առավոտ չէր քնում: Եվ ապա այդպիսի ճգնասեր առաքինությամբ առ Աստված, հրեշտակների առաջնորդությամբ, տեղափոխվեց:

## 265 Բ

### Ողջույն քեզ, Մարիամ՝, ասելու մասին

Մի խիստ մեղսասեր մարդ սովոր էր մշտապես փառաբանելու կույս Մարիամին եւ իր սովորական աղոթքն էլ նրան մատուցելու: Մի օր, երբ անապատում շատ քաղցած էր, նրան երևաց Սբ. Աստվածածինը՝ վայելչագեղ կույսերով հանդերձ, բերեց նրան ազնվական կերակուրներ, բայց գարշելի ու կեղտոտ ամանով: Եվ ասաց նրան.

- Կեր՛ սա:

Իսկ նա ասաց.

- Կերակուրն այդ բարի ու գեղեցիկ է, բայց չեմ կարող ուտել այդ գարշելի ամանի պատճառով:

Այդ ժամանակ ամենօրինյալ Տիրամայրն ասաց նրան.

- Փառաբանությունը, որ ինձ մատուցում ես, բարի է ու գեղեցիկ, բայց սիրտդ՝  
անմաքուր, որի համար էլ չեմ սիրում և չեմ ընդունում այն:  
Դրանից հետո (մարդը) ապաշխարությամբ սրբվեց:

### ԸՆԿԵՐՈՋԸ ՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ Հովհաննես առաքյալն ու Եփեսոսի ավետարանիչն ապրեց մինչև խոր  
ծերություն՝ այնքան, որ աշակերտներն իրենց ձեռքերի վրա էին նրան եկեղեցի  
տանում: Եվ քանիցս, ժողովարանում նրանց քարոզելիս, ուրիշ ոչինչ չէր ասում,  
միայն հիշեցնում էր. «Որոյակներ՝ սիրեցեք՝ միմյանց»: Իսկ եղբայրները, որ իր հետ  
էին, զարմանալով, որ նույն բանն է կրկնում, ասում են նրան.

- Վարդապետ՝, ինչու՞ ես մշտապես նույն բանը կրկնում:

Պատասխանում է.

-Այն պատճառով, որ սա Տիրոջ պատվիրանն է, և եթե միայն սա կատարեցիր,  
բավական է:

302 Ա

### ՎԱՇԽԻ (ՇԱՀԻ) ՄԱՍԻՆ

Մի վաշխառու իր կնոջ հետ անկողնում քնած էր և ահա հանկարծակի քնից  
զարթնելով՝ ելնում է անկողնուց: Կինը հարցնում է նրան, թե՞

- Ուր՞ ես այդքան շտապում:

Պատասխան է տալիս, թե՞

- Այժմ տարված եմ Աստծո դատաստանով, և այնտեղ այնքան  
ամբաստանություններ բարդեցին իմ վրա, մինչև որ այլևս չկաչողացա ոչ մի խոսք  
ասել:

Այս ասելով՝ վերցրեց իր պատառոտված հանդերձները, ելավ տնից և փախավ  
վանք, որտեղ երբեք չկարողացան նրան ապաշխարության բերել:

Հետո նրան ազգականները վանքից վերցրեցին եւ տուն տարան: Եվ երբ գետի միջով անցնում էին, տեսան, որ մի արագընթաց նավ իրենց է մոտենում: Երբ վաշխառուն նայեց, տեսավ, որ նավը լի էր դեերով, և նրա համար էր գալիս, որ իրեն տանի հավիտենական տանջանքների: Եվ երբ նավը մոտեցավ նրանց, անմիջապես դեերը խլեցին նրան բռնությամբ նրանցից (ազգականներից) և իրենց նավը տանելով՝ իսկույն նրանց աչքերից աներևութացան՝ նավով հանդերձ: Արդ, վաշխառուի օրինակից պարզ է դառնում, որ ինչպես այս կյանքում ես առնում, նույնպես էլ հանդերձյալում պատիժն է տրվում:

313 Ա

### ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի աշխարհական մարդ ականատես եղավ մի քահանայի, որ շնություն էր անում, սակայն, երբ հաջորդ օրը քահանան Պատարագ էր մատուցում, հույսով, առանց երկմտելու գնաց նրա մոտ և նրա ձեռքից հաղորդեց: Եվ հաղորդությունից հետո քահանայից խնդրում է, որ իր բորոտությամբ պատված ճակատին խաչակնքի: Երբ խաչակնքեց, բորոտությունը կեղևի պես բացվելով՝ ընկավ և ճակատը առողջացավ:

Հիրավի, հիանալի են Աստծո գործերը և դատաստանն էլ՝ լի: Մեղանչել էր (քահանան), սակայն չմնաց առանց քահանայագործության շնորհի. թեպետ քահանան դատվելու պատճառ էր ծնել, բայց ուներ զորություն, որպեսզի իմանանք, որ երբ քահանային ենք մոտենում՝ ոչ թե մարդու, այլ՝ Աստծուն ենք մոտենում, Ով նրանց (քահանաների) ձեռքով մեզ շնորհներ է պարգևում և սրբում է մեզ: Նա, ով նրան (քահանաներին) հավատով է մոտենում, ինչ որ խնդրում է՝ կընդունվի: Եվ որ՝ քահանաների մեղքերը չեն վնասում հավատացյալներին և ոչ էլ քահանայի վարքը որևէ կերպ օգնում է մեր հավատին, քանզի քահանան ըստ էության մարդ է և օժտված տկարությամբ: (Նա) չի կարող օգնել, ինչպես որ դու: Դու նրան հավասար ես անկարությամբ: